

Կարմիր Խաչի սիրելի՛ բարեկամներ

1920 թվականից ի վեր Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Կարմիր Խաչի միջազգային շարժման սկզբունքներին հավատարիմ, առաքելություն է ստանձնել Հայաստանում ջատագովն հանդիսանալու մարդասիրության և բարեգործության:

Բազմաթիվ են Հայկական Կարմիր Խաչի ընկերության գործունեության ոլորտները: Լայնածավալ աշխատանքներ են տարվում սոցիալ-առողջապահական, առաջին օգնության, աղետներին նախապատրաստման և արձագանքման, բնակչության տեղաշարժի, որոնման, երիտասարդական և այլ ուղղություններում: Բազմաթիվ շահառուներ օգտվում են Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից մատուցած ծառայություններից, և այս գործունեությունը կրում է շարունակական բնույթ:

Յուրաքանչյուր հասարակության քաղաքակրթվածության աստիճանը որոշվում է տվյալ հասարակության մեջ խոցելիների և կարիքավորների հանդեպ վերաբերմունքով: Այս առումով մեր անելիքները բավական շատ են: Օգտվելով առիթից, կոչ եմ անում մեր հասարակությանը համախմբել ուժերը և միանալ Հայկական Կարմիր խաչի ընկերությանը խոցելի խմբերին աջակցելու և նրանց խնդիրներին արձագանքելու համար:

Ավարտելով, ցանկանում եմ հայտնել իմ երախտագիտությունը բոլոր այն նվիրյալ կամավորներին և բարերարներին, որոնց օգնությամբ Հայկական Կարմիր Խաչի ընկերությունն իր 90-ամյա գործունեության ընթացքում հաղթահարելով բազում դժվարություններ, իր ներդրումն է ունեցել հասարակական խնդիրների լուծման գործում` հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը:

ՄԵՆՔ ՕԳՆՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Մխիթար Մնացականյան
ՀԿԽԸ նախագահ

Dear Red Cross friends,

Starting 1920, the Armenian Red Cross Society, being true to the Red Cross International Movement principles, fulfills its mission in the territory of the Republic of Armenia advocating for humanity and charity.
The spheres of the activities of the Armenian Red Cross Society are multifold. Large-scale activities are being carried out in the direction of social and health care, first aid, disaster preparedness and response, population movement, tracing service, youth and other directions. Numerous beneficiaries receive support from the activities carried out by the Armenian Red Cross Society which is ongoing.

The civility level of each society is measured by the attitude towards the vulnerable and people in need. In this regard, our society still has a long way to go. Taking the opportunity I call upon the public to mobilize our power and join the Armenian Red Cross Society to support the vulnerable groups and respond to their problems.

Concluding, I would like to extend gratitude to all those with support of whom the Armenian Red Cross Society during its 90 year activity, overcoming many difficulties, has had its contribution in the solving of the society problems being auxiliary to the government.

WE HELP WITH YOUR HELP

Mkhitar Mnatsakanyan
ARCS President

# 2010թ. ՀԿԽԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

| Իրականացնող ուղղությունը / Ծրագրի անվանումը<br>Direction/Program | Նպատակը<br>Goal | Նվիրատուն<br>Donor | Սկիզբը<br>Beginning | Ավարտը<br>End | Իրականացման վայրը<br>Location | Շահառուները<br>Beneficiaries | Բյուջեն<br>Budget | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Սոցիալական բաժին / Social Department** | | | | | | | | |
| **<<Հայաստանում նախկին նացիոնալ - սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք>><br>Psychosocial and medical support to the victims of National Socialism in Armenia** | Հայաստանում բնակվող նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավում<br>Improve psycho-social condition of victims of National Socialism living in Armenia | Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյութեմբերգի երկրամասային միվարումը և Գերմանական <<Հիշողություն, պատասխանատվություն , ապագա>> հիմնադրամը<br>The Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Responsibility, Future" German Foundation | 01.07.2008 | 30.06.2011 | Երևան, Վանաձոր և Տավուշի մարզի 13 համայնքներ<br>Yerevan, Vayots Dzor and 13 communities of Tavush region | Հայաստանում բնակվող նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհեր<br>Victims of National Socialism living in Armenia | 33 875 | Եվրո<br>EUR |
| **Սոցիալ-հոգեբանական աջակցություն միայնակ ծերերին<br>Psychosocial support to lonely elderly people** | Նվազեցնել բնակչության սոցիալական խոցելիության աստիճանը, հատկապես միայնակ ծերերի շրջանում<br>To reduce the degree of social vulnerability of population, especially among lone elderly people | Նորվեգական Կարմիր Խաչ<br>Norwegian Red Cross | 01.02.2010 | 31.08.2011 | Շիրակի, Գեղարքունիքի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզեր<br>Shirak, Gegharkunik, Armavir and Vayots Dzor regions | Միայնակ կարիքավոր ծերեր,<br>Lone elderly people in need | 20 000 | Շվ. Ֆր.<br>CHF |
| **«Գթություն»<br>"Charity"** | Սատարել և օժանդակել ծայրահեղ ծանր վիճակում գտնվող միայնակ անժառանգ ծերերին<br>To assist and support lonely elderly people living in extreme bad conditions | Դենո Գոլդ Մայնինգ Քամփնի<br>Deno Gold Mining Company | 01.05.2010 | 01.05.2011 | Սյունիքի մարզ, քաղաք Կապան<br>Kapan city, Syunik region | Ծանր վիճակում գտնվող միայնակ անժառանգ ծերեր<br>Lonely elderly people living in extreme bad conditions | 2 512 400 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Ֆինանսական աջակցություն միայնակ ծերերին<br>Financial support to lonely elderly people** | Ֆինանսական աջակցություն ցուցաբերել միայնակ ծերերին<br>To assist lonely elderly people with financial support | Արմավիրի մարզպետարան<br>Municipality of Armavir region | 12.01.2010 | 29.01.2010 | ՀՀ Արմավիրի մարզ<br>Armavir region of RA | Արմավիրի մարզի միայնակ ծերեր<br>Lonely elderly people of Armavir region | 200 000 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Առողջապահական բաժին /Health Department** | | | | | | | | |
| **<<Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը >><br>Stop Multidrug Resistant Tuberculosis** | Նվազեցնել հիվանդների խոցելիությունը ԲԴԿ ՏԲ նկատմամբ<br>To decrease the vulnerability of patients towards MDR TB | Էլայ Լիլի և կոմպանիա<br>ELI Lilly and Company | 01.04.2009 | 30.11.2011 | Երևան<br>Yerevan | Բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդներ, որոնք գտնվում են բուժման պահպանողական փուլում<br>Multi drug-resistant tuberculosis patients in the continuation phase of treatment | 149 726 | ԱՄՆ<br>USD |
| **<<Վնասի նվազեցում >><br>Harm Reduction** | Նվազեցնել ներերակային թմրամիջոցներ օգտագործողների խոցելիությունը ՄԻԱՎ-ի, հեպատիդի նկատմամբ<br>To decrease the vulnerability of intravenous drug users towards HIV, Hepatitis | Գլոբալ Հիմնադրամ<br>Global Fund | 01.04.2010 | 31.10.2012 | Լոռու մարզ, Վանաձոր<br>Lori region, Vanadzor city | Ներերակային թմրամիջոցներ օգտագործողներ<br>Intravenous drug users | 73 853 | Եվրո<br>EUR |
| **<<Պետության կարիքների համար հիվանդներին սոցիալական աջակցության ծառայություններ >><br>Services of Social Support to Patients for State Needs** | Բարձրացնել բուժման նկատմամբ ՏԲ հիվանդների հետևողականությունը սոց աշխատողների կողմից նրանց և նրանց ընտանիքի անդամների լուսաբանմամբ, տեղեկատվական նյութերի տարածմամբ ու սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրմամբ<br>To raise TB patients adherence towards treatment through dissemination, distribution of informative materilas to TB parients and their family members and through providing psychosocial support by social workers | Գլոբալ Հիմնադրամ<br>Global Fund | 07.10.2010 | 31.07.2011 | ՀՀ<br>RA | Ռեգուլյար և ԲԴԿ ՏԲ հիվանդներ<br>Regular and MDR TB patients | 214 008 320 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժին/ Disaster Management and Population Movement Department** | | | | | | | | |
| **Աղետների ռիսկի նվազեցում<br>"Disaster Risk Management"** | Նվազեցնել ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի 11 քաղաքային և գյուղական համայնքների խոցելիությունը աղետների նկատմամբ և բարձրացնել նրանց պատրաստվածության աստիճանը<br>To reduce the vulnerability of 11 urban and rural communities of Lori and Tavush Regions of RA towards disasters and increase the level of their preparedness | ԳՏՀ <<Աղետներին նախապատրաստում Հարավային Կովկասում>><br>GTZ "Disaster Preparedness in South Caucasus" | 22.12.2009 | 30.05.2010 | ՀՀ Լոռու և Տավուշի մարզեր<br>Lori and Tavush Regions of RA | ՀՀ բնակչություն, մասնավորապես դպրոցահասակ երեխաներ և ՀԿԽԸ աշխատակիցներ և կամավորներ<br>RA population, particularly pupils and ARCS staff and volunteers | 8 590 000 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Դպրոցների նախապատրաստում<br>"Disaster Preparadenes at Schools"** | Բարձրացնել և հզորացնել Երևան քաղաքի 6 դպրոցների աշակերտների և ուսուցիչների աղետներին դիմակայելու գիտելիքներն ու պատրաստվածության աստիճանը:<br>To raise awareness and strengthen capacities of pupils and teachers from 6 schools of Yerevan in order to get prepared to withstand natural disasters | Նորվեգական ԿԽ, ԿԽ/ԿՄ ՄՖ աջակցությամբ<br>Norwegian Red Cross, supported by IFRC | 01.02.2010 | 31.07.2010 | Երևան քաղաք<br>Yerevan city | Երևանի 6 դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ<br>Pupils and teachers from 6 schools of Yerevan | 20 000 | Շվ. Ֆր.<br>CHF |
| **Կլիմայի փոփոխություն<br>Chlimate Change** | Հզորացնել ՀԿԽԸ կարողությունները Կլիմայի փոփոխության հիմնահարցերի շուրջ և ինտեգրել այն աղետների ռիսկի նվազեցման և այլ ծրագրերին:<br>Strengthen the capacity of ARCS on Climate Change issues and integrate it in the disaster risk reduction and other programs. | Նիդերլանդական ԿԽ, ԿԽ/ԿՄ ՄՖ աջակցությամբ<br>Netherlands Red Cross, supported by IFRC | 01.04.2010 | 31.08.2010 | Երևան քաղաք<br>Yerevan city | ՀՀ Լոռու մարզի 71 և Տավուշի մարզի 40 քաղաքային և գյուղական համայնքներ<br>71 urban and rural communities of Lori region and 40 of Tavush region | 13 591 | Շվ. Ֆր.<br>CHF |
| **Դպրոցների նախապատրաստում<br>"Disaster Preparadenes at Schools"** | Բարձրացնել և հզորացնել Երևան քաղաքի 8 դպրոցների աշակերտների և ուսուցիչների աղետներին դիմակայելու գիտելիքներն ու պատրաստվածության աստիճանը:<br>To raise awareness and strengthen capacities of pupils and teachers from 8 schools of Yerevan in order to get prepared to withstand natural disasters | Նորվեգական ԿԽ, ԿԽ/ԿՄ ՄՖ աջակցությամբ<br>Norwegian Red Cross, supported by IFRC | 01.06.2010 | 31.12.2010 | Երևան քաղաք<br>Yerevan city | Երևանի 8 դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ<br>Teachers and pupils from 8 targeted schools of Yerevan | 33 000 | Շվ. Ֆր.<br>CHF |
| **Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում<br>"Building Safer Local Communities in South Caucasus"** | Բարձրացնել տեղական համայնքների և կառույցների կարողությունը և նվազեցնել խոցելիությունը բնական աղետների հանդեպ` աջակցելով այն ռազմավարություններին, որոնք կնպաստեն նրանց պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, ռիսկի նվազեցմանը և աղետների արձագանքմանը:<br>To increase resilience and reduce vulnerability of local communities and national institutions by supporting strategies that enable them to prepare for, mitigate and respond to natural disasters in Armenia | DIPECHO, Դանիական և Իսլանդական ԿԽ<br>Danish and Icelandic Red Cross | 15.04.2010 | 15.07.2011 | ՀՀ Շիրակի մարզ<br>RA Shirak region | ՀՀ Շիրակի մարզի 9 ռիսկային համայնքներ և Գյումրիի և շահառու 9 համայնքների 32 դպրոցներ<br>9 communities and 32 schools of Shirak region | 263 610 | Եվրո<br>EUR |
| **Դպրոցների նախապատրաստում<br>"Disaster Preparadenes at Schools"** | Բարձրացնել և հզորացնել ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի 6 դպրոցների աշակերտների և ուսուցիչների աղետներին դիմակայելու գիտելիքներն ու պատրաստվածության աստիճանը:<br>To raise awareness and strengthen capacities of pupils and teachers from 6 schools of Armavir and Vayots Dzor regions in order to get prepared to withstand natural disasters | Նորվեգական ԿԽ, ԿԽ/ԿՄ ՄՖ աջակցությամբ<br>Norwegian Red Cross, supported by IFRC | 01.09.2010 | 01.09.2011 | ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզեր<br>Armavir and Vayots Dzor regions of RA | ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի 6 դպրոցների աշակերտներ և ուսուցիչներ<br>Teachers and pupils from 6 schools of Armavir and Vayots Dzor regions | 17 000 | Շվ. Ֆր.<br>CHF |

# PROGRAMS IMPLEMENTED BY ARCS IN 2010

| Իրականացնող ուղղությունը / Ծրագրի անվանումը<br>Direction/Program | Նպատակը<br>Goal | Նվիրատուն<br>Donor | Սկիզբը<br>Beginning | Ավարտը<br>End | Իրականացման վայրը<br>Location | Շահառուները<br>Beneficiaries | Բյուջեն<br>Budget | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզի Լուսառատ համայնքի դպրոցի վերանորոգում<br>Renovation of Lusarat community school in Ararat region | Նվազեցնել Արարատի մարզի Լուսառատ համայնքի սոցիալական խոցելիությունը և հզորացնել դպրոցի կարողությունները:<br>Reduce social vulnerability and strengthen the capacity of the school of Lusarat community in Ararat region | Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն<br>Japan International Cooperation Agency | 18.10.2010 | 18.10.2011 | ՀՀ Արարատի մարզ<br>Ararat region of RA | ՀՀ Արարատի մարզի, Լուսառատ համայնքի բնակիչներ, մասնավորապես դպրոցահասակ երեխաներ<br>Population of Lusarat community in Ararat region, particularly pupils | 90 011 | ԱՄՆ դոլար<br>USD |
| Աջակցություն ապաստան հայցողներին<br>Assistance to Asylum Seekers | ՀՀ-ում ապաստան հայցողներին մարդասիրական, բժշկական օգնության, սոցիալ-հոգեբանական աջակցության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում: Վաղ ազդարարման համակարգի մշակում:<br>Provision of humanitarian, medical, psychosocial assistance and legal counseling to asylum seekers in RA. Development of an Early Warning System. | ՄԱԿ ՓԳՀ<br>UNHCR | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ մարզեր, Երևան<br>RA regions, Yerevan | ՀՀ-ում ապաստան հայցողներ<br>Asylum seekers of RA | 17 293 234 | ՀՀ դրամ<br>AMD |
| Մի դատի'ր շապիկից<br>Don't judge by the cover | Բարձրացնել բնակչության իրազեկվածության մակարդակը Հայաստանում աճող սոցիալական և ազգային բազմազանության վերաբերյալ, նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և նվազեցնել միգրանտների հանդեպ նախապաշարմունքները` բարելավելով բնակչության` օտարերկրացիների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը:<br>To raise awarness of the population about increasing social and national diversity in RA, to foster the human rights and to reduce prejudices towards migrants through improvement of the overall population's attitude towards foreigners. | Համաշխարհային բանկի Քաղաքացիական հասարակություն հիմնադրամ<br>World Bank Civil Society Fund | 01.07.2010 | 31.12.2010 | ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Վայոց Ձորի մարզեր, Երևան<br>Gegharquniq, Tavush, Shirak and Vayots Dzor regions, Yerevan | Փախստականներ, ապաստան հայցողներ և էթնիկ փոքրամասնություններ Հայաստանում, ինչպես նաև հայ ուսանողներ, քաղաքացիական հասարակություն, կառավարություն և տեղական համայնքներ<br>Refugees, asylum seekers and ethnic minorities in Armenia, as well as Armenian students, the civil society, the Government and local communities. | 9 503 | ԱՄՆ դոլար<br>USD |
| **Առաջին օգնության բաժին/First Aid Department** | | | | | | | | |
| "Առաջին օգնության դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար"<br>"First Aid courses for population of RA remote communities" | Նվազեցնել հեռավոր համայնքների բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ, նվազագույնի հասցնել վնասվածքների և մահացության թիվը նրանց մոտ:<br>To reduce vulnerability of population of remote communities to disasters and domestic incedents, to reduce the number injuries and motrality. | Գերմանական Կարմիր խաչ<br>German Red Cross | 15.05.2010 | 15.05.2011 | ՀՀ հեռավոր համայնքներ<br>Remote communities of RA | ՀՀ հեռավոր համայնքների բնակիչներ<br>Inhabitants of remote communities of RA | 4 314 456 | ՀՀ դրամ<br>AMD |
| "Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար"<br>"First Aid courses for population of RA border communities" | Նվազեցնել սահմանամերձ բնակչության խոցելիությունը տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ, նվազագույնի հասցնել վնասվածքների և մահացության թիվը նրանց մոտ:<br>To reduce vulnerability of population of border communities to disasters and domestic incedents, to reduce the number injuries and motrality. | ԿԽՄԿ<br>ICRC | 01.06.2010 | 20.11.2010 | ՀՀ սահմանամերձ համայնքներ<br>Border communities of RA | ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչներ<br>Inhabitants of border communities of RA | 1 373 297 | ՀՀ դրամ<br>AMD |
| "Առաջին օգնության տարրեր" դասընթաց 10 - 12 տարեկան երեխաների համար<br>"First Aid elements" training for children aged 10-12 | Նվազեցնել Գեղարքունիքի մարզի 10-12 տարեկան երեխաների խոցելիությունը, տարբեր աղետների և կենցաղային պատահարների նկատմամբ, ԱՕ գիտելիքների և հմտությունների ուսուցանումով:<br>To reduce vulnerability of 10-12 aged children of Gegharquniq region to different disasters and domestic incidents thuogh spreading FA skills and knowledge. | Վորլդ Վիժն<br>World Vision | 01.04.2010 | 30.05.2010 | Գեղարքունիքի մարզ<br>Gegharqunik region | Գեղարքունիքի մարզի 10-12 տարեկան դպրոցականներ<br>10-12 years old schoolchildren of Gegharqunik region | 1 866 620 | ՀՀ դրամ<br>AMD |
| "Առաջին օգնություն և անվտանգ վարքագծի դաստիարակում"<br>"First Aid and Safe Behaviour" | Նպաստել երեխաների մոտ անվտանգ վարքագծի ձևավորմանը` իրենց ուսուցիչներին և դաստիարակներին տալով համապատասխան գիտելիքներ և հմտություններ:<br>To promote formation of Safe Behaviour among children, through giving coresponding knowledge and skills to their teachers and educators. | Վորլդ Վիժն<br>World Vision | 01.08.2010 | 30.09.2010 | Ալավերդի, Երևան<br>Alaverdi, Yerevan | Ալավերդու և Երևանի ուսուցիչներ և դաստիարակներ<br>Teachers and educators of Alaverdi and Yerevan | 2 174 886 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Որոնման բաժին/Tracing Department** | | | | | | | | |
| <<Որոնում >> ծառայություն<br>"Tracing" Service | Կազմալուծված ընտանիքների վերամիավորում, պատերազմների, հակամարտությունների և աղետների հետևանքով անհայտ կորածների որոնում:<br>Tracing of the missing and restoration of family links lost through wars, conflicts and disasters. | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 2 200 000 | ՀՀ դրամ<br>AMD |
| <<Աղետներից բխող ԸԿՎ պոտենցիալ կարիքների գնահատում >><br>"Assessment of the potential RFL needs during disasters" | Հնարավոր աղետներից բխող ընտանեկան կապերի վերամիավորման կարիքների գնահատում:<br>Assessmant of the potential restoring family links needs during disasters. | ԿԽՄԿ<br>ICRC | 01.09.2010 | 25.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 2 241 300 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Երիտասարդական բաժին/ Youth Department** | | | | | | | | |
| Ռեսուրսների մոբիլիզացում<br>Resource Mobilization | Զարգացնել ԱԸ ռեսուրսների մոբիլիզացման կարողությունները և հայթայթել ռեսուրսներ ծրագրերին աջակցելու նպատակով<br>To develop Resource Mibilization skills of the NS and do fundraising for supporting the programs. | Կխ և ԿՄ ՄՖ<br>IFRC | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ԵԿԽ կամավորներ, ՀՀ ազգաբնակչություն<br>RCY Volunteers, RA population | 9 000 | Շվ. Ֆր.<br>CHF |
| Սոցիալ-հոգեբանական աջակցություն փախստականներին<br>Psychosoial support to Refugees | Աջակցել փախստականների սոցիալական խնդիրներին և նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:<br>To support the social problems of refugees and contribute to their integration into society. | Կխ և ԿՄ ՄՖ<br>IFRC | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ԵԿԽ կամավորներ, ՀՀ ազգաբնակչություն<br>RCY Volunteers, RA population | 21 000 | Շվ. Ֆր.<br>CHF |
| Ֆրանսիական խնամակալություն<br>French Trustee's support to orphans | Ֆինանսական աջակցություն ծնողազուրկ երեխաներին<br>Financial support to orphans | <<Հայ Կխ օգնության կոմիտե>>-ի Լիոնի մասնաճյուղ<br>Lionese branch of the Committee for support to the Armenian Red Cross | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀԿԽԸ 3 ՄՄ-ների ծնողազուրկ երեխաներ<br>Orphans in 3 regional Branches | 4420 | Եվրո<br>EUR |
| Կողմնորոշվելու ժամանակն է<br>Time for choice | Հանրային լայնածավալ միջոցառումների միջոցով բարձրացնել իրազեկությունը ՀՀ ազգաբնակչության` հատկապես երիտասարդության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին առնչվող խնդիրների մասին<br>To raise awareness of RA population esp. young people about HIV/AIDS related issuses through public large events. | Գլոբալ Հիմնադրամ<br>Global Fund | 01.10.2009 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 149 912 | Եվրո<br>EUR |
| Եվրոպական Կամավորական Ծառայություն<br>European Voluntary Service (EVS) | Փորձի և մշակութային արժեքների փոխանակում երիտասարդների միջև<br>Experience and cultural exchange among young people | Եվրոմիություն<br>European Union | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | 14 հայ և օտարերկրյա կամավորներ<br>14 Armenian and foreign volunteers | 17 108 | Եվրո<br>EUR |
| **Լրատվության և լուսաբանման բաժին / Information and dissemination department** | | | | | | | | |
| <<Լուսաբանում >><br>"Dissemination" | Կխ շարժման և հիմնարար սկզբունքների, ՀԿԽԸ պատմության և գործունեության, ՄՄԻ լուսաբանում և Կխ խորհրդանշանի պաշտպանություն<br>Dissemination of RC Movement and Fundamental Principles, ARCS History and activities, IHL and protection of RC Emblem | ԿԽՄԿ<br>ICRC | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀՀ ազգաբնակչություն<br>RA population | 9 301 350 | ՀՀ դրամ<br>AMD |
| **Ֆինանսական ծառայություն / Financial Service** | | | | | | | | |
| Ռեսուրսների մոբիլիզացում<br>Resource Mobilization | Զարգացնել ՀԿԽԸ կարողությունները` խոցելի խմբերին բարելավված ծառայություններ ցուցաբերելու համար<br>Develop ARCS capacities for better social delivery to the vurnelable groups | Հանգանակություն<br>Donations | 01.01.2010 | 31.12.2010 | ՀՀ տարածք<br>RA territory | ՀԿԽԸ աշխատակիցներ և կամավորներ<br>ARCS staff and volunteers | 1 521 580 | ՀՀ դրամ<br>AMD |



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) հիմնադրվել է 1920թ. մարտի 19-ին Սպանդարատ Կամսարականի կողմից:

The Armenian Red Cross Society (ARCS) was founded on 19 March, 1920 by Spandarat Kamsarakan.

## ՀԿԽԸ կայացման ուղին

Կարմիր խաչի մարդասիրական առաքելությունը Հայաստանում դրսևորվել է դեռևս 1877թ., երբ Ֆիննական Կարմիր Խաչի դաշտային հոսպիտալները հիմնվեցին Էրիվան նահանգում, ինչպես նաև 1896թ., երբ Ամերիկյան Կարմիր խաչի կամավոր Կլարա Բարտոնը օգնություն է ցուցաբերում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող աղետի մատնված հայ ազգաբնակչությանը:

## Review of ARCS foundation

The Humanitarian Mission of Red Cross in Armenia started in 1877, when field hospitals of the Finnish Red Cross were established in Erivan region, as well as in 1896, when Clara Barton, a volunteer of the American Red Cross was assisting heavily suffering Armenian population in Osmanian Turkey.

| | | |
|---|---|---|
| ՀՀ Պառլամենտը վավերացրեց ՀԿԽԸ կանոնադրությունը | 1920 | The Parliament of RA ratified the Statutes of ARCS |
| ՀԿԽԸ ժամանակավոր դադարից հետո վերսկսեց գործունեությունը | 1921 | The activities of ARCS were resumed after temporary cancellation |
| Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ շարունակվեց ՀԿԽԸ գործունեությունը և վերահաստատվեց կանոնադրությունը | 1922 | The activities of ARCS were resumed and its Statutes was re-approved by the Government of Armenian Soviet Socialist Republic. |
| ՀԿԽԸ դարձավ ԽՍՀՄ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների դաշինքի անդամ | 1925 | ARCS became a member of the Alliance of Red Cross and Red Crescent Societies of USSR |
| ՀԿԽԸ 14-րդ համագումարում ՀԿԽԸ հռչակվեց որպես ՀՀ գործող Կարմիր խաչի միակ ազգային ընկերություն | 1992 | ARCS was declared as the only National Society in the country during the 14th session of General Assembly of ARCS |
| ՀՀ-ում բացվեց ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնը | 1992 | "Gratsia" International Rehabilitation Center of ARCS was established in RA |
| ՀՀ միացավ 1949թ. ժնևի 4 Կոնվենցիաներին և դրա 1977թ. I և II Լրացուցիչ արձանագրություններին | 1993 | RA ratified the Geneva Conventions of 1949 and its I and II Additional Protocols of 1977 |
| ՀԿԽԸ ճանաչվեց ՀՀ նախագահի հրամանագրով | 1994 | ARCS was recognized by the RA President's statement |
| ՀԿԽԸ ճանաչվեց Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից որպես 166-րդ ազգային ընկերություն | 1995 | ARCS was recognized by the Interntaional Committee of the Red Cross as the 166th National Society |
| ՀԿԽԸ դարձավ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի անդամ | 1995 | ARCS was admitted to the International Federation of Red Cross and Red Crescent Societies as its full member |
| Սոլֆերինո քաղաքի Կարմիր խաչի թանգարանում տեղադրվեց ՀԿԽԸ հուշաքարը | 1997 | ARCS memorial plate was placed in the Red Cross Museum of Solferino |
| ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կարմիր խաչի և Կարմիր մահիկի խորհրդանշանների գործածության և պաշտպանության մասին» ՀՀ օրենքը | 2002 | The National Assembly of RA adopted law on the use and protection of Red Cross and Red Crescent emblems |

**ՀԿԽԸ Առաքելությունը**

Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ: Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ: Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

**Նպատակը**

Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասայական, սեռային, հոգևոր դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից:

**Նախագահ**
Մխիթար Մնացականյան

**Գլխավոր քարտուղար**
Աննա Եղիազարյան

**Պատվավոր նախագահ**
Աշոտ Սարգսյան

**Պատվավոր անդամներ**

| | |
|---|---|
| Ռիտա Փարսադանյան | ՀԿԽԸ նախագահ 1975-1991 թթ |
| Պիեռ Միշո | Ֆրանսիական Կարմիր խաչ |
| Գերհարդ Մայեր | Գերմանական կարմիր խաչ |
| Դերենիկ Դումանյան | ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտի տնօրեն |
| Գագիկ Մարտիրոսյան | ՀՀ Պետնախարար |
| Գուֆար Կուրմաև | Ռուսական Կարմիր խաչ, փրկարար |
| Հարություն Եսոյան | ՀԿԽԸ փրկարար |
| Վալերի Վարդանյան | ՀԿԽԸ փրկարար |

**Ընդհանուր տեղեկություններ**

| | |
|---|---|
| Մարզային մասնաճյուղ | 11 |
| Տարածքային մասնաճյուղ | 3 |
| Համայնքային մասնաճյուղ | 52 |
| Աշխատակիցներ | 70 |
| Անդամներ | 3400 |
| Կամավորներ | 3200 |
| «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն | 1 |
| Բարեգործական ճաշարան | 3 |
| Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոն | 1 |
| Հյուրանոցային համալիր | 1 |
| Տարածաշրջանային բազա | 1 |
| Ուսումնական կենտրոն | 1 |

**ARCS Mission**

To reduce vulnerability of the population through mobilization of the power of humanity. To be prepared to cope with situations, which may cause vulnerability among the population. To provide essential support by assisting people made vulnerable by harsh socioeconomic conditions.

**Goal**

The overall goal of the Society is to prevent and alleviate human sufferings regardless of nationality, race, sex, religious beliefs, class and political opinions.

**President**
Mkhitar Mnatsakanyan

**Secretary General**
Anna Yeghiazaryan

**Honorary President**
Ashot Sargsyan

**Honorary Members**

| | |
|---|---|
| Rita Parsadanyan: | ARCS President throughout 1975-1991 |
| Pier Michaud: | French Red Cross |
| Gerhard Mayer: | German Red Cross |
| Derenik Dumanyan: | Director , National Health Institute, RA |
| Gagik Martirosyan: | State Minister, RA |
| Gaphur Kurmayev: | Russian Red Cross, rescuer |
| Harutyun Yesoyan: | ARCS rescuer |
| Valeri Vardanyan: | ARCS rescuer |

**Overview**

| | |
|---|---|
| Regional Branches: | 11 |
| Territorial Branches : | 3 |
| Community Branches: | 52 |
| Employees: | 70 |
| Members: | 3400 |
| Volunteers: | 3200 |
| “Gratsia” International Rehabilitation Centre: | 1 |
| Charity kitchens: | 3 |
| First Aid Training Methodological Centre: | 1 |
| Hotel Compound: | 1 |
| Regional Warehouse Base: | 1 |
| Training Centre: | 1 |

# ՍՈՑԻԱԼ-ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին, նվազեցնել սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավել համայնքների ազգաբնակչության առողջական վիճակը լայնածավալ գործունեություն է ծավալում ազգաբնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

# HEALTH AND CARE

With the purpose of assisting the state structures, decreasing social vulnerability of the people in need, as well as improving health of conditions of people in communities, the Armenian Red Cross Society (ARCS) implements large-scale activities dedicated to providing social support to population.







## Սոցիալական ծրագրեր

ՀԿԽԸ իրականացնում է մի շարք սոցիալական ծրագրեր ուղղված միայնակ ծերերի, նացիոնալ-սոցիալիստների զոհերի, հանրակացարանաբնակ և առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաների սոցիալական իրավիճակի բարելավմանը:

Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման և Գերմանական «Հիշողություն, Պատասխանատվություն, Ապագա» հիմնադրամի ֆինանսավորմամբ 2010թ. նույնպես շարունակվել է «Հայաստանում նախկին նացիոնալ-սոցիալիստների զոհերի սոցիալ-հոգեբանական և բժշկական խնամք» ծրագիրը, որի շրջանակներում Երևանից, Վանաձորից և Տավուշի մարզի 13 համայնքների 96 շահառուներին ամսեկան մեկ անգամ տրվել է սնունդ, բժիշկի նշանակմամբ դեղամիջոցներ, հիգիենիկ պարագաներ, հոգեբանական աջակցություն, ինչպես նաև բժշկական տարրական խնամք (վիրակապություններ, ներարկումներ, արյան ճնշման չափում, խորհրդատվություններ և այլն):

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) աջակցությամբ և Նորվեգական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ «Սոցիալ-հոգեբանական ծառայություն միայնակ և փախստական ծերերին» ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց Ձորի, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի մարզերում երիտասարդ կամավորները այցելել են միայնակ ծերերին, բաշխել են սննդի փաթեթներ և հիգիենիկ պարագաներ, իրականացրել տնային խնամք և փոքր վերանորոգման աշխատանքներ, նպաստել հոգեբանական վերականգնմանը և ինտեգրմանը, ինչպես նաև շահառուների համար կազմակերպել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ: Ծրագրի նպատակն էր նաև մեղմել հանրակացարանաբնակ ընտանիքների երեխաների մեկուսացվածությունը և նպաստել նրանց կրթական խնդիրներին՝ կազմակերպելով բազմաբնույթ դասընթացներ, ժամանցային և սպորտային միջոցառումներ, ամառային վրանային ճամբարներ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են էքսկուրսիաներ, որոնք շփման և ինտեգրման մեծ հնարավորություն են ընձեռնել երեխաներին:

Առավել կարիքավոր ծնողազուրկ երեխաները 2010թ. շարունակել են ստանալ եռամսյակային դրամական նպաստ Լիոնի «Հայ Կարմիր Խաչի օգնության կոմիտե» -ի կողմից: Նրանց համար կամավորների ուժերով ամռանը կազմակերպվել է վրանային ճամբար:

2005թ.-ից ի վեր «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի»-ի ֆինանսավորմամբ ՀԿԽԸ Սյունիքի մարզում իրականացնում է «Գթություն» ծրագիրը, որի շրջանակներում ՀԿԽԸ սատարում և օժանդակում է ծայրահեղ ծանր վիճակում գտնվող միայնակ անժառանգ ծերերին՝ տրամադրելով բարոյահոգեբանական, մարդասիրական և նյութական աջակցություն:

Սոցիալական ոլորտում ամենատարբեր սոցիալական ծառայություններ են մատուցվել ավելի քան 1908 շահառուի:

## Social programs

ARCS implements a number of social programs directed at improvement of lonely elderly people, victims of National Socialism, children living in dormitories and social conditions of the most vulnerable orphans.

During 2010 ARCS continued implementation of "Psychosocial and Medical support to the victims of National Socialism in Armenia" program with funding of Baden Wurttemberg Provincial Branch of the German Red Cross and "Memory, Responsibility, Future" German Foundation. In the frames of the program 96 beneficiaries from Yerevan, Vanadzor and 13 communities of Tavush region were distributed parcels of food, medicaments prescribed by doctors, hygiene supplies on a monthly basis. Psychological support as well as nurse care (bandages, injections, measurement of blood pressure, consultations and ect.) has also been provided to them.

In the frames of the "Psychosocial Care to Lonely Elderly People and Elderly Refugees" program, which was implemented with the support of the International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) and funded by the Norwegian Red Cross, young volunteers visited lonely elderly people, distributed parcels of food and hygiene supplies, carried out home care and little repair works, contributed to psychological rehabilitation and integration, as well as organized different social and cultural events for beneficiaries in Yerevan and Armavir, Gegharqunik, Shirak, Vayots Dzor, Kotayk, Syunik and Tavush regions of RA. The purpose of the program was also to alleviate the isolation of children coming from families living in dormitories and contribute to their education by organizing various training sessions, entertainment and sport events and summer camps. In the frames of the program excursions were organized which gave the children a great opportunity for communication and integration.

The most vulnerable orphans continued receiving financial support from the Lyon Branch of the Committee for Support to the Armenian Red Cross on a quarterly basis. A camp was organized for them by the efforts of the volunteers in summer.

Since 2005 ARCS is implementing "Charity" program with the financial support of "Deno Gold Mining Company" in Syunik region. In the frames of the program ARCS assists and supports lonely elderly people living in extreme bad conditions through moral, humanity and material support.

In the social sphere more than 1908 beneficiaries were provided with different social services.




ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ



## Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գործունեությունը տուբերկուլոզի ոլորտում

Սկսած 2009 թվականից «Էլայ Լիլի և կոմպանիա» ընկերության ֆինանսական աջակցությամբ, Բժիշկներ առանց սահմանների - Ֆրանսիա (ԲԱՍ-Ֆրանսիա) կազմակերպության տեխնիկական աջակցությամբ և ՀԿԽԸ համատեղ ջանքերով իրականացվում է «Կանգնեցնել բազմադեղորայքակայուն տուբերկուլոզը» (ԲԴԿ ՏԲ) ծրագիրը: 2010թ. ընթացքում ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների պոլիկլինիկաներում: Հիվանդներին տրամադրվել են տեղեկատվական և լուսաբանման նյութեր, սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ բուժումը չընդհատելու խրախուսման նպատակով, ուղղակիորեն վերահսկվել է դեղորայքի ընդունումը, ինչն ապահովում է բուժման բարեհաջող ավարտը:

2010թ. ՀԿԽԸ ընդլայնել է իր գործունեությունը ՏԲ ոլորտում՝ իրականացնելով «Պետության կարիքների համար հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագիրը, որը կազմում է ՏԲ Ազգային ծրագրի մասը: Ծրագիրը ֆինանսավորվում է Գլոբալ Հիմնադրամի կողմից, որի ռեցիպիենտը հանդիսանում է Առողջապահության նախարարությունը, իսկ սուբ-ռեցիպիենտը՝ ՀԿԽԸ:

Ծրագիրն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1. Ուսուցողական ծրագրեր ՏԲ հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար տանը և պոլիկլինիկայում
2. ՏԲ հիվանդներին սոցիալական աջակցության շրջանակներում սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում
3. ՏԲ հիվանդների ուսուցողական միջոցառումների իրականացում՝ բուժման նկատմամբ հետևողականության բարձրացման նպատակով
4. ԲԴԿ ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության տրամադրում
5. Խորհրդատուների աշխատանքային խմբի միջոցով աշխատանքների կազմակերպում՝ բուժման հետևողականության բարձրացման նպատակով
6. Դեղորայքի ընդունում անմիջական վերահսկողության տակ (DOT)
7. Հիվանդների համար կրթական և խորհրդատվական սեմինարների կազմակերպում:

Տուբերկուլոզի կանխարգելմանն ուղղված ծրագրերում ընդհանուր առմամբ ընդգրկվել են 1315 ռեգուլյար և ԲԴԿ ՏԲ հիվանդներ:

## The Armenian Red Cross Society's (ARCS) activities in the sphere of Tuberculosis

Since 2009 "Stop Multi Drug-Resistant Tuberculosis" (MDR TB) program has been implemented with the financial support of "Eli Lilly and Company", with technical support of Médecins Sans Frontières-France (MSFF) and with joint efforts of the ARCS. During 2010, the program was implemented in the policlinics of Avan and Nor Norq communities of Yerevan. The patients were provided with information and dissemination materials, psychosocial support as an incentive for treatment adherence, and direct observation therapy to ensure successful completion of treatment.

In 2010 ARCS widened its activities in the sphere of TB by implementing "Services of Social Support to Patients for State Needs" program, which is a part of TB National program. The program is financed by the Global Fund whose recipient is the Ministry of Health and sub-recipient is ARCS.

The program is implemented in the following directions:

1. Educational programs for TB patients and their family members at home and in policlinics.
2. Provision of food and hygienic parcels to TB patients in the frames of social support
3. Implementation of the educational programs for TB patients with the purpose of increasing the adherence to treatment
4. Provision of social assistance to MDR TB patients
5. Organization of activities through counseling groups with the purpose of increasing the adherence to treatment
6. Direct Observed Treatment (DOT)
7. Organization of educational and advisory seminars for patients.

In general 1315 Regular and MDR TB patients were included in the program directed at prevention of Tuberculosis.


ՄԻԱՎ
HIV
ՁԻԱՀ
AIDS





## ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումն ազգաբնակչության՝ հիմնականում երիտասարդների շրջանում, կանխարգելելու և խարանն ու խտրականությունը նվազեցնելու նպատակով 2004թ-ից ի վեր Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Կողմնորոշվելու ժամանակն է» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ այլ մարզերում երիտասարդ կամավորների ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք հանրային միջոցառումներ՝ սպորտային մրցախաղեր, բաց դասեր, կինոդիտումներ, թոք-շոուներ, քարոզարշավներ, մոմավառության երթեր, համերգներ և այլն, հայտնի մարդկանց մասնակցությամբ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման այս միջոցառումներին նոր թափ հաղորդեցին առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերում տեղեկատվության տեղադրումը և բջջային կարճ հաղորդագրությունները, որոնք որպես նորարական մեթոդներ լավ հնարավորություն տվեցին իրազեկել ազգաբնակչությանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի վերաբերյալ:

2010թ. Գլոբալ Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվեց «Վնասի նվազեցում» ծրագիրը՝ ՁԻԱՀ-ի նկատմամբ թմրամիջոցների ներերակային օգտագործողների (ԹՆՕ) խոցելիությունը նվազեցնելու նպատակով: Ծրագրի շրջանակներում երեք աութրիչ աշխատողներն այցելել են շահառուներին իրենց հավաքատեղիներում և բաշխել պահպանակներ, միանգամյա օգտագործման ներարկիչներ, ալկոհոլային խծուծներ և տեղեկատվական նյութեր, ինչպես նաև իրականացվել է սոցիալ-հոգեբանական և իրավական խորհրդատվություններ, կազմակերպվել են քննարկումներ շահառուներին հուզող հարցերի վերաբերյալ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրերի շրջանակներում 80 մարդ ստացել է սոցիալ-հոգեբանական աջակցություն, իսկ 2 090 000 մարդ լուսաբանվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի վերաբերյալ:

## HIV/AIDS prevention

Since 2004 the Armenian Red Cross Society (ARCS) has been implementing the “Time for choice” program with the purpose of prevention of transmission of HIV/AIDS among the population, especially among youth, as well as to reduce stigma and discrimination. The program is being implemented with the financial support of the Global Fund.

In the frames of the program large scale public events, including sport competitions, open lessons, film watching, talk shows, campaigns, candlelit marches, concerts and other activities were organized with the participation of famous people in Yerevan and other regions of RA by active participation of young volunteers. Promotion of these events on HIV/AIDS prevention was done by placing information on the most popular social networking sites and sending short mobile messages. These new innovation methods gave a good opportunity to inform the population on HIV/AIDS problem.

In 2010 with the financial support of the Global Fund “Harm Reduction” program was implemented in order to decrease the vulnerability of injecting drug users. In the frames of the program three outreach employees visited beneficiaries at their assembly points and distributed condoms, single use syringes, alcoholic pads and informational booklets, as well as carried out psychosocial and legal consultancy, organized discussions on problems of beneficiaries.

Within the programs directed at HIV/AIDS prevention 80 people received psychosocial support and 2 090 000 people were disseminated on HIV/AIDS problem.





## Հայկական Կարմիր խաչի ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները ողնուղեղի, ողնաշարի, հենաշարժական ապարատի հիվանդությունների բուժումն է, ընդհանուր և հետվնասվածքային վերականգնումը, հիվանդների մասնագիտական ուսուցումը, սոցիալ-հոգեբանական վերականգնումը, սանատոր-կուրորտային բուժումը:

2010թ. կենտրոնը շարունակել է իր համագործակցությունը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և ԱՄՆ-ի դեսպանատան հետ: Համագործակցության նպատակն է օգնել Իրաքի հայ փախստականներին` տրամադրելով կենտրոնի հնարավորությունները:

Ողնուղեղի և ողնաշարի վնասվածքով յուրաքանչյուր հիվանդի հետ աշխատում է առանձին բժիշկ, բուժքույր, վերկանգնող թերապևտ, հոգեբան և սպորտային մարզիչ:

Կենտրոնն ունի ընդլայնված ստացիոնար և ամբուլատոր բժշկական ծառայություններ` ախտորոշում,ջրաբուժություն, ջրային մերսում, ցեխաբուժություն/տորֆաբուժություն,կինեզոթերապիա,ֆիզիոթերապևտիկ բուժում, բուժական և դասական մերսում, էլեկտրաթերապիա, ինհալացիոն բուժումներ, ասեղնաբուժություն, սպորտային համալիր, սթրեսոլոգի կաբինետ, «ՍԿԵՆԱՌ» բաժանմունք:

Իր գործունեության ընթացքում կենտրոնում արդեն բուժվել և իրենց առողջությունն են վերականգնել մոտ 10000 հիվանդներ ՀՀ-ից, ԱՊՀ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներից: Կենտրոնում տարեկան կտրվածքով բուժում են ստանում 900-1000 հաշմանդամ, 280 վետերան, 5 փախստական, մոտ 526 սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ:

Կատարվում են նաև դիսպանսեր տնային այցելություններ հաշվառման վերցրած ողնաշարի և ողնուղեղի վնասվածքով հաշմանդամ հիվանդներին` ցուցաբերելով բժշկական օգնություն և հետազոտում:

Կենտրոնի «Փարոս» երգչախումբը և բասկետբոլի «Կիլիկիա» թիմը պարբերաբար մասնակցում են սահմանափակ կարողությունների տեր մարդկանց համար տարբեր երկրներում կազմակերպվող համերգներին և մրցումներին` տուն վերադառնալով բարձր գնահատականների արժանացած:

Կենտրոնը գլխավորում է բժիշկ և ադմինիստրատոր Ալեքսանդր Մնացականյանը:

## "Gratsia" International Rehabilitation Center of the Armenian Red Cross Society

The main activity areas of the Center are treatment of marrow, spinal cord, musculoskeletal diseases, general and post-traumatic rehabilitation, patients' vocational training, psychosocial rehabilitation and sanatorium-and-spa treatment.

The Center continued co-operation with United Nations High Commissioner for Refugees in Armenia and US Embassy in 2010. The goal of the co-operation is to support Armenian refugees from Iraq, offering Center's opportunities.

In the Center each patient with marrow and spinal cord injuries is individually treated and cared by a doctor, nurse, rehabilitation therapist, psychologist and sport trainer.

The Center has broadened inpatient and outpatient rehabilitation services – diagnostics, hydropath, hydro massage, mud cure/peat cure, kinesitherapy, physiotherapy procedures, medical and classical massage, electrotherapy, inhalation therapy, acupuncture, sport complex, stressologist's room, “SKENAR” Department.

During its activities about 10000 patients from RA, CIS countries, from a number of European and Middle East countries have already received treatment and rehabilitation in the Center. During the year, 900-1000 disabled people, 280 veterans, 5 refugees, about 526 socially vulnerable people are cured in the Center.

Dispensary home visits are also made to the registered disabled patients with spinal cord and marrow traumas, providing them with medical assistance and examination.

“Pharos” choir and “Kilikia” basketball team of the Center regularly participate in concerts and competitions organized for people with limited capacities in different countries and return with high appreciations.

The Center is lead by doctor and administrator Aleksandr Mnatsakanyan.



# ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղետների կառավարման (ԱԿ) ուղղության հիմնական նպատակն է նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը բնական և տեխնածին աղետների նկատմամբ` համայնքային մակարդակում աղետների ռիսկի նվազեցման միջոցով և հզորացնել Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) աղետների նախապատրաստման և արձագանքման (ԱՆԱ) համակարգը:

# DISASTER MANAGEMENT

The main aim of Disaster Management (DM) direction is to reduce the vulnerability of the population towards natural and man-made disasters through disaster risk reduction on a community level and strengthen Disaster Preparedness and Response structure of the Armenian Red Cross Society (ARCS).





ՀԿԽԸ շարունակեց «Աղետների ռիսկի կառավարում» ծրագրի իրականացումը` Գերմանական տեխնիկական համագործակցության հայաստանյան գրասենյակի ֆինանսավորմամբ, որը մեկնարկել էր 2009թ-ին: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում ՀԿԽԸ շահառու 11 համայնքներից իննում ձևավորվեց կամավորական Համայնքային թիմեր: Ավելին, բոլոր 11 համայնքներում կազմակերպվեցին «Աղետների ռիսկի կառավարում» և «Աղետների կառավարման պլանավորում» խորագրով դասընթացներ բոլոր թիրախ համայնքներում: Ավելին, Տավուշի և Լոռու մարզերում կազմակերպվեցին նաև ՀՀ աղետների կառավարման օրենսդրության վերաբերյալ մարզային կլոր սեղաններ:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽ/ԿՄ ՄՖ) աջակցությամբ և Նորվեգական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ 2010 թ. իրականացվեցին երեք մինի ծրագրեր «Աղետներին նախապատրաստումը դպրոցներում» խորագրով: Հաշվետու տարում ծրագիրն իրականացվեց միայն Երևանի դպրոցներում, իսկ ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի 6 դպրոցներում իրականացվող ծրագրի հիմնական գործողությունները կատարվելու են 2011թ.: Ծրագրերի շրջանակներում կազմակերպվեցին «Աղետների նախապատրաստում» խորագրով երկօրյա դասընթացներ ՀԿԽԸ 50 կամավորների համար: Ինչպես նաև կազմակերպվեցին «Աղետներին պատրաստվածություն» թեմայով ուսուցողական սեմինարներ` Երևանի շահառու 14 դպրոցների վեցերրորդ և յոթերրորդ դասարանցիների մասնակցությամբ: Այնուհետև յուրաքանչյուր դպրոցում ուսուցանված աշակերտներից ձևավորվեց հինգ թիմ, որոնց համար կազմակերպվեցին լրացուցիչ դասընթացներ և «Մանկական վիկտորինա» խորագրով մրցույթ: Վերոնշյալ 14 դպրոցների ութերրորդ և իններորդ դասարանցիների համար կազմակերպվեցին «Երկրաշարժ» թեմայով սեմինարներ` ուղղված երեխաների իրազեկության և պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Ավելին, կազմակերպվեցին «Երկրաշարժ» և «Տարահանման կազմակերպումը դպրոցներում» թեմաներով սեմինարներ շահառու 14 դպրոցների ուսուցիչների համար: Նույն դպրոցներում կազմակերպվեցին նաև ուսուցողական տարահանումներ: Աղետների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով տպագրվեցին նաև տեղեկատվական պաստառներ և բուկլետներ և բաշխվեցին բոլոր շահառու դպրոցներին:

ԿԽ/ԿՄ ՄՖ աջակցությամբ և Նիդերլանդական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ հաշվետու տարում իրականացվեց նաև «Կլիմայի Փոփոխություն» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում պատրաստվեց Հայաստանի համար Կլիմայի փոփոխության գնահատման զեկույց, ինչպես նաև կենտրոնական գրասենյակում կազմակերպվեց Կլիմայի Փոփոխության վերաբերյալ սեմինար ՀԿԽԸ 35 աշխատակիցների համար: Ավելին, տպագրվեց կլիմայի փոփոխության վերաբերյալ 10400 տեղեկատվական բուկլետներ և 1200 պաստառներ:

2010թ. Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության և ՀԿԽԸ միջև ստորագրվեց Արարատի մարզի Լուսառատ համայնքի դպրոցի առաջին հարկի վերանորոգման ֆինանսավորման մասին համաձայնագիր: Վերանորոգվող հարկում սովորում են տարրական դասարանների 150 աշակերտներ: Վերանորոգման աշխատանքները կսկսվեն 2011թ. և աշխատանքների մոնիթորինգը կիրականացնի ՀԿԽԸ:

ARCS continued implementation of the “Disaster Risk Management” project financed by German Technical Cooperation Agency (GTZ) Armenia, which was launched in 2009. Within the frames of the project for the current year ARCS established voluntary based community teams in nine of eleven targeted communities. Moreover, basic “Disaster Risk Management” and “Disaster Management Planning” workshops were organized in all 11 project's targeted communities. Also there were round table discussions about the disaster management related legislation of Armenia in Tavush and Lori regions.

ARCS implemented three mini-projects titled “Disaster Preparedness in Schools” with the support of the International Federation of Red Cross and Red Crescent Societies (IFRC) and funding by Norwegian Red Cross. For the current year the project was implemented only at 14 schools of Yerevan and the main activities of the project conducting at six schools from Armavir and Vayots Dzor regions will be implemented in 2011. In the frames of the project two days “Disaster Preparedness” training was organised for 50 ARCS volunteers. Also, “Disaster Preparedness” seminars were conducted for pupils of $6^{th}$ and $7^{th}$ grade from 14 targeted schools of Yerevan. Later, 5 teams were formed in each school for who the “Children Quiz” contest with five days educational seminars have been conducted. Moreover, in the same schools special seminars titled “Earthquake” were organized for pupils from $8^{th}$ and $9^{th}$ grades in order to raise pupils' awareness and level of preparedness. Also, special seminars on “Earthquake” and “Evacuation” were organized for teachers of targeted schools, after which evacuations from schools theoretically and practically have been conducted. In order to raise people's awareness on disaster, educational posters, booklet, manuals and handbooks were printed and distributed to all targeted schools.

In the current year ARCS implemented the Climate Change pilot project supported by IFRC and funded by Netherlands Red Cross. Within the scope of the project Climate Change assessment report for Armenia has been developed by local expert. Seminar on Climate Change has been organized in Headquarters for 35 ARCS staff members. Moreover, 10400 copies of educational booklet and 1200 copies of poster on Climate change were developed and printed.

In 2010 an agreement was signed between Japan International Cooperation Agency and ARCS on financing the renovation of the first floor of Lusarat community's school from Ararat region, where 150 pupils of elemental classes study. The renovation will be started in 2011 and ARCS will monitor the whole process.

ՀԿԽԸ իրականացնում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագիրը, որը մեկնարկեց 2010թ-ի ապրիլ ամսին՝ 15 ամիս տևողությամբ: Ծրագիրը իրականացվում է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի, Դանիական և Իսլանդական Կարմիր խաչերի համաֆինանսավորմամբ և ԿԽ/ԿՄ ՄՖ օժանդակությամբ: Ծրագրի անցկացման համար, որպես թիրախ ընտրվել են Շիրակի մարզի ինը համայնքներ և 32 դպրոցներ: Ծրագրի գործողությունները բաժանվում են հետևյալ չորս ուղղություններով՝

1. Համայնքների աղետներին արձագանքման և ռիսկերի նվազեցման կարողությունների զարգացում
2. Բնակչության իրազեկման բարձրացում, հատկապես դպրոցներում աղետներին պատրաստվածության ուսումնական ծրագրերի միջոցով
3. Աղետների կառավարման ոլորտում մարզային համակարգման հզորացում
4. Հարավային Կովկասում աղետների կառավարման ոլորտում համագործակցության հզորացում:

Առաջին ուղղության շրջանակներում հաշվետու տարում թիրախ ինը համայնքներում իրականացվեց աղետների նկատմամբ խոցելիության և կարողությունների գնահատում (ԽԿԳ): Գնահատման արդյունքների հիման վրա ՀԿԽԸ թիմը Շիրակի մարզային Փրկարարական ծառայության (ՇՓԾ) հետ համատեղ մշակեց ԽԿԳ զեկույց յուրաքանչյուր համայնքի համար, որն իր մեջ ներառում է տվյալ համայնքի աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլան և ռիսկային գոտիների քարտեզ: Ավելին, Շիրակի մարզում ձևավորվեցին ինը Համայնքային թիմեր (ՀԹ), որոնց կազմում ընդգրկված են 180 անդամներ: ՀԹ-ին Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտում համապատասխան գիտելիքներ տալու և նրանց պատրաստվածության բարձր մակարդակը ապահովելու համար ՀԿԽԸ կազմակերպեց «Աղետների կառավարման հիմունքներ», «Մարդասիրական օգնության տրամադրում» և «Փրկարարական հիմունքներ և առաջին օգնություն» թեմաներով տեսական և գործնական դասընթացներ: Որպես դասընթացների ավարտական փուլ՝ կազմակերպվեցին ուսումնական խաղ վարժանքներ բոլոր թիրախ ինը համայնքներում՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ՇՓԾ և «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ: Ավելին, յուրաքանչյուր ՀԹ անդամներին տրվեց փրկարարական գույք (սաղավարտ, պարան, բահ, բարձրախոս և այլն) և հանդերձանք (բաճկոն, տաբատ և այլն): Մարզում կազմակերպվեց Կլիմայի Փոփոխության և Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) թեմայով սեմինար՝ մարզային գործընկերների համար:



ARCS started the implementation of “Building Safer Local Communities in South Caucasus” project from the April 2010 with 15 months duration. The project is co-funded by European Commission Humanitarian Aid Department (DIPECHO), Danish and Icelandic Red Cross in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies. Nine communities and 32 schools of Shirak region were selected as a target for the implementation of the project. The project activities are conducted the following four directions:

1. Development of community capacities in disaster preparedness and disaster response
2. Enhancement of public awareness through educational programs on Disaster Preparedness especially in schools
3. Enhancement of regional coordination on Disaster Management
4. Enhancement of cooperation on Disaster Management in the South Caucasus

Within the frames of the first direction of the project for the current year Vulnerability and Capacity Assessment (VCA) was conducted in nine target communities. Based on the VCA results ARCS team jointly with Shirak Regional Rescue Service developed VCA reports per each community, which included Disaster Preparedness and Response plan of action and community risky areas mapping for each community. Moreover, nine Community Teams (CT) were formed in Shirak region consisting of 180 members. To provide the CTs with corresponding knowledge in the sphere of Disaster Risk Management (DRM) and ensure a high level of their preparedness, ARCS organized the theoretical and practical trainings titled “Disaster Risk Management Skills”, “Provision of Humanitarian Assistance (“Relief”) and “Rescue Skills and First Aid”. As the final stage of the training ARCS jointly with Shirak regional Rescue Service of RA Ministry of Emergency Situations and “LORE” rescue team NGO organized simulation drill for each of nine community teams. Moreover, special equipments (helmet, axe, shovel, speaker etc.) and uniforms (jacket, trousers etc.) were distributed to nine CT members. Also, a workshop on Climate Change and Disaster Risk Reduction (DRR) was organized in Shirak region for regional partners.

Ծրագրի երկրորդ ուղղության շրջանակներում շահառու 32 դպրոցների 150 ուսուցիչների համար ՀԿԽԸ թիմը «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատի հետ համատեղ, կազմակերպեց հատուկ դասընթացներ՝ ԱՌՆ, առաջին օգնություն, և այլ նմանատիպ թեմաներով: Այնուհետև, դասավանդված յուրաքանչյուր ուսուցիչ իր դպրոցի 100 աշակերտի համար կազմակերպեց հատուկ դասընթաց, որի ընթացքում աշակերտներին բաժանվեցին ծրագրի շրջանակներում մշակված և տպագրված ԱՌՆ և կլիմայի փոփոխության թեմաներով ուսումնական նյութեր: Ինչպես նաև, աշակերտները մշակեցին իրենց՝ աղետի ընտանեկան պլանը և մասնակցեցին ներդպրոցային մրցույթներին, որոնք իրականացվեցին բոլոր թիրախ դպրոցներում: Մրցույթում հաղթող բոլոր 96 երեխաները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով: Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց նաև Դեկտեմբերի 7-ին նվիրված հանրային միջոցառում, որի ընթացքում տեղի ունեցավ «Աղետի ընտանեկան պլանի» եզրափակիչ մարզային փուլը:

Երրորդ ուղղությամբ հաշվետու տարում ստեղծվեց մարզային համակարգման հանձնաժողով և անցկացվեց երկու հանդիպում: Իրականացվեց Շիրակի մարզում ԱՌՆ ոլորտում գործող կազմակերպությունների քարտեզագրում և տպագրվեց տեղեկագիր: Ավելին, ՀԿԽԸ Շիրակի մարզային և տեղական իշխանությունների հետ համատեղ ստեղծեցին ԱՌԿ Շիրակի մարզային համակարգման հանձնաժողովի կանոնակարգ:



Չորրորդ ուղղության շրջանակներում տեղի ունեցավ տարածաշրջանային համագործակցության երկու հանդիպում Վրաստանում: ՀԿԽԸ ներկայացուցիչները մասնակցեցին հանդիպումներին, կիսեցին իրենց լավագույն փորձը և քննարկեցին ծրագրի ընթացքն ու ձեռքբերումները:

Ծրագրի իրականացման ընթացքում ՀԿԽԸ սերտորեն համագործակցեց մի շարք պետական և ոչ պետական կառույցների հետ, ինչպիսիք են՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, Շիրակի մարզային և տեղական իշխանությունները, ՇՓԾ, «ԼՈՌԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ն և Արտակարգ ալիք լրատվական կենտրոնը:

Ընդհանուր առմամբ՝ վերոնշյալ ծրագրերում ընդգրկված շահառուներն են մոտ 92 980 մարդ:

Within the frames of the second direction of the project ARCS team jointly with “LORE” rescue team conducted special trainings for 150 teachers from 32 targeted schools of Shirak region. The DRR related issues, first aid and other similar issues were included in the agenda. After, each trained teacher organized local trainings with 100 pupils, during the training educational materials on DRR and Climate Change, which were developed and printed within the framework of the project, were distributed to each pupil as well. Later, pupils developed their Family Disaster Plan and participated in-school competitions organized in all targeted schools. All 96 winners of the competition were awarded incentive prizes. After, public event dedicated to December 7 was organized, during which Family Disaster Plan final regional competition took place.

In the frames of the third direction of the project Shirak Regional Coordination Commission was formed and two meetings were held. Also, stakeholders' mapping of Shirak region operating in the field of DRR was developed and printed. Moreover, ARCS with Shirak regional and local authorities developed DRM Shirak Regional Coordination Commission Regulation.

In the frames of the forth direction two regional cooperation meetings took place in Georgia. ARCS representatives took part in the meetings and shared their best experience and discussed the process and achievements of the project.

During the implementation of the project ARCS closely cooperated with number of governmental and non-governmental organizations, such as the Ministry of Emergency Situations of RA, the Ministry of Education and Science of RA, National Survey for Seismic Protection and Crisis Management State Academy of the Ministry of Emergency Situations of RA, Shirak regional and local authorities, Shirak Rescue Service, "LORE” rescue team NGO and “Artakarg Alik” media center.

Totally, the beneficiaries of the above mentioned projects are about 92 980 people.

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Բնակչության տեղաշարժի (ԲՏ) ուղղության շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում ապաստան հայցողներին և փախստականներին առաջնային մարդասիրական, բժշկական, սոցիալ-հոգեբանական աջակցության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում, սահմանային վերահսկողության իրականացում, փախստականների մեծածավալ ներհոսքի դեպքում վաղ ազդարարման համակարգի ստեղծում, փախստականների ինետեգրմանը նպաստող գործունեության ծավալում, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ՀՀ-ում թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործունեությանը:



# POPULATION MOVEMENT

In the frames of the Population Movement (PM) direction the Armenian Red Cross Society (ARCS) is providing asylum seekers and refugees in RA with basic humanitarian, medical, psychosocial assistance and advocacy. The direction is also implementing regular border monitoring, is working on establishment of an Early Warning System in case of a massive refugee influx and is involved in activities aimed at integration of refugees, as well as prevention of trafficking and fighting against it in RA.





2002թ-ից ՀԿԽԸ ԲՏ ուղղությունը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Աջակցություն ապաստան հայցողներին» ծրագիրը, որը, ենթարկվելով որոշակի լրացումների և բարեփոխումների, շարունակվել է նաև 2010թ.: Ծրագրի հիմնական նպատակն է՝ աջակցել ՀՀ-ում ապաստան հայցողներին, բարձրացնելով հանրության իրազեկման մակարդակը՝ պաշտպանել նրանց իրավունքները և խթանել փախստականների և ապաստան հայցողների ինտեգրումը հասարակության մեջ, ինչպես նաև իրականացնել սահմանային անցակետերի վերահսկում՝ կազմավորելու վաղ արձագանքման համակարգ փախստականների մեծածավալ ներհոսքի դեպքում, ապահովելու պոտենցյալ ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության և ընդունելության համապատասխանությունը միջազգային չափանիշներին և ապահովելու չվերադարձելիության սկզբունքի կիրառումը:

ՀԿԽԸ կողմից իրականացվող կարիքների գնահատման արդյունքների հիման վրա 2010թ. 46 ապաստան հայցողների Իրանից, Իրաքից, Վրաստանից, Աբխազիայից, Կուբայից, Չինաստանից, Կոտ Դ'Իվուարից, Նիգերիայից, Մալիից, Սիրիայից, Աֆղանստանից և այլն տրամադրվել է ֆինանսական, նյութական, առողջապահական, սոցիալական աջակցություն, ինչպես նաև իրավական խորհրդատվություն:

Սահմանային մոնիթորինգային այցերը շարունակվել են ՀԿԽԸ գլխավոր գրասենյակի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզային մասնաճյուղերի և Ստեփանավանի տարածքային մասնաճյուղի կողմից ՀՀ յոթ սահմանակետեր՝ Բագրատաշեն, Գոգավան, Բավրա, Մեղրի, ինչպես նաև «Արմենիա միջազգային օդանավակայաններ» («Զվարթնոց»), Այրումի երկաթուղային կայանի անցակետ և Գյումրու օդանավակայան: ՄԱԿ ՓԳՀ հետ համատեղ անցկացվել է ուսուցողական դասընթաց՝ ուղղված «Արմենիա միջազգային օդանավակայաններ»-ի սահմանապահ զորքերի իրազեկության մակարդակի բարձրացմանը ՀՀ Փախստականների և ապաստանի մասին օրենքի վերաբերյալ:

2010թ. ընթացքում ևս շարունակվել են մոնիթորինգային շաբաթական այցերը ապաստան հայցողների Հատուկ կացարան: ՄԱԿ ՓԳՀ աջակցությամբ ՀԿԽԸ Հատուկ կացարանին տրամադրել է անհրաժեշտ կահավորում և կենցաղային ապրանք, և այժմ Հատուկ կացարանի պայմանները լիովին համապատասխանում են միջազգային չափանիշներին:

With financial support of the United Nations High Commissioner for Refugees (UNHCR) in Armenia ARCS PM direction has been implementing “Assistance to Asylum Seekers” project since 2002 which was amended and continued in 2010. The main aim of the project is to assist asylum seekers in RA by raising the level of awareness of population, to protect their rights and support integration of refugees and asylum seekers into the society, as well as to conduct monitoring of border crossing points for establishment of an Early Warning System in case of a massive refugee influx, ensuring protection of rights of potential asylum seekers and correspondence of their reception to international standards and compliance of the non-refoulement principle.

Based on needs assessment results undertaken by ARCS, 46 asylum seekers from Iran, Iraq, Georgia, Abkhazia, Cuba, China, Côte d'Ivoire, Nigeria, Mali, Syria, Afghanistan and etc. were provided with financial, material, medical, social assistance as well as advocacy in 2010.

Representatives of ARCS Head Quarters, Shirak, Syuniq, Tavush Regional Branches and Stepanavan Territorial Branch continued implementation of border monitoring missions to seven border crossing points of RA – Bagratashen, Gogavan, Bavra, Meghri as well as “Armenia International Airports” (“Zvartnots”), Ayrum Railway Station and Gyumri airport. A training session was organized for border guards of the “Armenia International Airports” jointly with UNHCR to raise the level of awareness of the border guards on RA Law on Refugees and Asylum.

Weekly monitoring visits to the Reception Centre for asylum seeker also continued in 2010. With the support of UNHCR, ARCS provided the Reception Centre with necessary equipment and household goods and now the conditions of the Reception Centre are in line with international standards.



Համաշխարհային բանկի Քաղաքացիական հասարակություն հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվել է «Մի՛ դատիր շապիկից» խորագիրը կրող վեցամսյա ծրագիրը, որի նպատակն էր՝ բարձրացնել ՀՀ-ում աճող սոցիալական և ազգային բազմազանության վերաբերյալ բնակչության իրազեկության մակարդակը, նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և նվազեցնել միգրանտների հանդեպ նախապաշարմունքները՝ բարելավելով բնակչության՝ օտարերկրացիների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը: Ծրագրի թիրախային խմբերն էին՝ ՀՀ-ում բնակվող փախստականները, ապաստան հայցողները և էթնիկ փոքրամասնությունները, ինչպես նաև հայ ուսանողները, քաղաքացիական հասարակությունը, կառավարությունը և տեղական համայնքները:

Ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում ընտրված բուհերում կազմակերպվել են «Կենդանի գրադարան» խորագիրը կրող միջոցառումներ, որոնք միավորել են հայ հասարակությանը՝ որպես Ընթերցողների, և փախստականներին՝ որպես Կենդանի գրքերի, 45 րոպե տևողությամբ զրույցի շուրջ: Կենդանի գրադարանի նպատակն էր ստեղծել երկխոսության հարթակ հայ հասարակության և ընդհանրացումների, կարծրատիպերի, անհանդուրժողականության և մեկուսացման հետևանքով առաջացող մարտահրավերների հաճախ բախվող խմբերի համար:

ՀԿԽԸ իր ակտիվ կամավորներից կազմել է Գրադարանավարների խումբ, որոնք հանդիսացել են կապող օղակ Գրքերի և Ընթերցողների միջև՝ միաժամանակ չմիջամտելով նրանց խոսակցությանը:

Միջոցառումների ավարտից հետո արդյունքներն ամփոփվել և քննարկվել են մի շարք կլոր սեղան-քննարկումների ժամանակ թիրախային չորս մարզերում և Երևանում՝ ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի, բուհերի ուսանողների, ԶԼՄ-ների, միգրացիայի ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների, կառավարության ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

ՀԿԽԸ վերլուծել է ծրագրից ստացված արդյունքները և հանդես է եկել առաջարկությունների ձեռնարկով, որը կծառայի որպես աջակից փաստաթուղթ և ուղեցույց բոլոր շահագրգիռ կողմերի համար հասարակության մեջ միգրանտների ինտեգրմանն ուղղված նախաձեռնություններ մշակելու և իրականացնելու հարցում:

Ծրագրի իրականացման վերջում «ԱՐ» հեռուստաալիքի «Օրրան» հաղորդման շրջանակներում կազմակերպվել է թոք-շոու, որտեղ քննարկվել են Հայաստանում միգրանտների ինտեգրմանը խոչընդոտող խնդիրները:

Ընդհանուր առմամբ բնակչության տեղաշարժի ուղղության շրջանակներում սպասարկվել են մոտ 700 շահառուներ:

With a financial assistance of the World Bank Civil Society Fund a six-months project called “Don't Judge by the Cover” was implemented. The aim of the project was to raise awareness about increasing social and national diversity in RA, to foster the human rights and to reduce prejudices towards migrants through improvement of the population's overall attitude towards foreigners. The target groups of the project were refugees, asylum seekers and ethnic minorities living in RA as well as Armenian students, civil society, the government and local communities.

In the frames of the project a series of Human Library events were organized in selected universities of Yerevan and Gegharqunik, Tavush, Shirak and Vayots Dzor regions of RA. The events gathered Armenians as “Readers” and refugees as “Human Books” for a 45-minutes chat. The aim of the Human Library was to create a platform for a dialogue between the Armenian society and the groups that often face challenges due to generalizations, stereotypes, intolerance and isolation.

ARCS formed a pool of Librarians from its active volunteers who were a connecting link between the Books and the Readers without interfering in a private conversation at the same time.

At the end of the events results were summarized and discussed during a few round tables in the four target regions as well as in Yerevan with the participation of ARCS Regional Branches, students of the Universities, the Mass Media, NGOs active in the sphere of migration, as well as representatives of the Government and other stakeholders.

ARCS analyzed results of the project and presented recommendations which will serve as an auxiliary document and a guideline for all stakeholders to develop and implement projects aimed at integration of migrants into the society.

At the end of the project a talk show was organized in the frames of “Orran” program and broadcasted by AR TV channel during which obstacles for integration of migrants in RA were discussed.

In total in the frames of PM direction services were provided to nearly 700 beneficiaries.

# ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Տարբեր տեսակի աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ բնակչության խոցելիության մակարդակը նվազեցնելու նպատակով Հայկական Կարմիր խաչի ընկերությունն (ՀԿԽԸ) Առաջին օգնության (ԱՕ) գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարբեր տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է Առաջին օգնության Եվրոպական Խորհրդատվական Կենտրոնի չափանիշներին համապատասխանող ԱՕ  և Անվտանգ վարքագծի դաստիարակման դասընթացներ և սեմինարներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար, ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծավալում գործունեություն՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի դաստիարակմանը:



# FIRST AID

With the purpose to decrease the vulnerability of the population towards different types of disasters and accidents the Armenian Red Cross Society (ARCS) disseminates First Aid (FA) knowledge and skills among different layers and age groups, in accordance with standards of European Reference Center for First Aid Education conducts training sessions and workshops on FA and safe behavior for different age and professional groups, provides FA services during mass events as well as carries out activities directed at the promotion of safe behavior of the growing generation.





2010թ. ընթացքում ԱՕ ոլորտում իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք են՝

**«Առաջին օգնության դասընթացներ ՀՀ հեռավոր համայնքների բնակիչների համար»**

Ծրագրի հիմնական նպատակն էր նվազեցնել հեռավոր համայնքների բնակիչների խոցելիությունը տարբեր աղետների և դժբախտ պատահարների նկատմամբ: Այդ նպատակին հասնելու համար իրականացվել են ԱՕ դասընթացներ ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում: Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև մեկ «Առաջին Օգնության հմտությունների դասավանդում» ԱՕ հրահանգիչների նախապատրաստման դասընթաց Երևանում: Դասընթացին մասնակցել են 17 ԱՕ մասնագետ, որոնցից ինը Երևանից էին, իսկ ութը՝ ՀՀ չորս մարզերից (Լոռի, Արագածոտն, Գեղարքունիք և Սյունիք): Դասընթացի արդյունքում բոլոր 17 մասնակիցներն որոկավորվեցին որպես ԱՕ հրահանգչի թեկնածուներ: Դասընթացն ավարտելուց հետո այդ հրահանգիչներն ակտիվորեն ներգրավվել են ՀԿԽԸ աշխատանքներին և վարել են ԱՕ դասընթացներ և սեմինարներ:

**«Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ գյուղերի բնակիչների համար»**

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ իրականացվել են վեց «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում:

**«Դասընթացներ երեխաների և նրանց խնամատարների համար»**

Վորլդ Վիժն Հայաստան բարեգործական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում 2010թ. ընթացքում իրականացվել են «ԱՕ և անվտանգ վարքագիծ» վեց դասընթաց Գեղարքունիքի մարզի 10-12 տարեկան երեխաների համար:

Երևանի և Ալավերդու նախադպրոցական հաստատությունների աշխատակիցների համար իրականացվել են «ԱՕ և անվտանգ վարքագծի դաստիարակում» երկու դասընթաց: Նախադպրոցական հաստատություններին տրամադրվել են անվտանգ վարքագծի դաստիարակման պարապմունքներն իրականացնելու համար նախատեսված խաղեր և մեթոդական ուղեցույց:

In 2010 different programs in the direction of FA were implemented, such as:

**“First Aid Courses for population of RA remote communities”**

The main purpose of the program was to decrease the vulnerability of population in remote communities towards different disasters and accidents. With this purpose FA courses were conducted in Shirak, Gegharqunik, Aragatsotn, Vayots Dzor and Tavush regions of RA. In the frames of the program training session on “Teaching Basic First Aid” was also conducted aimed at preparing FA instructors in Yerevan. 17 FA specialists took part in the courses, among them nine specialists from Yerevan, and eight from four regions of RA (Lori, Aragatsotn, Gegharqunik and Syunik). As the result of the training sessions all 17 participants were qualified as Candidates for FA instructors. After finishing this course the instructors were actively involved in the activities of the ARCS and facilitated FA training courses and seminars.

**“First Aid Courses for the population of RA border crossing villages”**

With the support of the International Committee of the Red Cross six “Basic First Aid” courses were implemented in Tavush and Syunik regions of RA.

**“Training sessions for children and their care givers”**

Within the frames of cooperation with World Vision Armenia charitable organization “FA and Safe Behavior” six training sessions were conducted for 10-12 years old children of Gegharqunik region.

Two training sessions for the employees of pre-school institutions in Yerevan and Alaverdi “FA and Safe Behavior” were conducted. Games and guidelines for promotion safe behavior were provided to pre-school institutions.



**ԱՕ դասընթացներ**

2010թ. իրականացվել են դասընթացներ և սեմինարներ ՀԿԽԸ կամավորների համար, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների աշխատակիցների համար, այդ թվում՝ ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակի, «Երևանի կոնյակի գործարանի» և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի պատվերով Մյասնիկյան ավանում գործող պոլիկլինիկայի բուժանձնակազմի համար: Շվեցարական Բարի Սամարացիների Համախմբության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում տասը ԱՕ դասընթաց է իրականացվել ՀՀ տարբեր համայնքներում: Իրականացվել է նաև հրահանգիչների նախապատրաստման մեկ դասընթաց, որին մասնակցել է ինը մասնագետ Միջին Ասիայի երկրներից:

**ԱՕ սպասարկում**

2010թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում անցկացված յոթ ֆուտբոլի խաղերի ընթացքում ԱՕ խմբերը իրականացրել են ԱՕ ծառայություն:

Արտակարգ իրավիճակների նախարարության խնդրանքով ՀԿԽԸ կամավորները օժանդակել են «Արմենիա 2010» դաշտային վարժանքի և «Արմենիա միջազգային օդանավակայաններ»-ում անցկացվող վարժանքի իրականացմանը՝ ապահովելով պայմանական տուժածների նմանակումը:

**ԱՕ մրցույթներ**

2010թ. հուլիսի 3-ին ՀԿԽԸ ԱՕ հավաքականը մասնակցել է Գերմանիայում կայացած «ԱՕ Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային մրցույթում», հավաքել ամենաբարձր միավորները և մրցույթից դուրս հանդես գալով գրավել է առաջին տեղը:

2010թ. հուլիսի 8-ից 11-ը մասնակցելով Սերբիայում կայացած ԱՕ Եվրոպական առաջնությանը, ՀԿԽԸ ԱՕ հավաքականը գրավել է իններորդ տեղը և ութերորդ տարին շարունակ տեղ գրավել Եվրոպական լավագույն ԱՕ խմբերի տասնյակում:

ՀԿԽԸ կողմից ԱՕ ոլորտում սպասարկված շահառուների քանակը՝ ավելի քան 1000 մարդ:

**FA training courses**

In 2010 training courses and seminars were conducted for ARCS volunteers and employees of different organizations such as United Nations office in RA, “Yerevan Brandy Company”, as well as for the medical staff of the clinic in Myasnikyan settlement ordered by “Children of Armenia Fund”. Ten FA training sessions were held in different communities of RA within the frames of program financed by the Swiss Federation of Samaritans. A training session for nine experts from Middle Asia was conducted aimed at preparing FA instructors.

**FA services**

During 2010 FA groups provided FA services in seven football matches of FIFA and UEFA.

According to the request of the Ministry of Emergency Situations of Armenia ARCS volunteers supported implementation of “Armenia 2010” field studies and studies in “Armenia International Airports” by providing the imitation of conditional victims.

**FA competitions**

In July 3, 2010, ARCS FA National Team participated in “FA Baden - Wuerttemberg Provincial Branch Competition” in Germany and took the highest scores, and took the first place performing out-of-competition.

From July 8 to 11, 2010, ARCS FA National Team participated in FA Convention in Europe that took place in Serbia taking ninth place, and continuously keeping place in top ten best FA teams for eight years.

About 1000 beneficiaries were provided services by the ARCS FA Direction.

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) «Որոնում» ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարահանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:

The Armenian Red Cross Society (ARCS) Tracing Service is dedicated to tracing and restoration of family links lost through population movement, searching of notifications confirming the place of the grave of the victims of war, conflict and disasters, tracing or assistance in the tracing of documents confirming that a person was subjected to evacuation, captivity, forced departure or forced labor during Second World War.



2010թ. ընթացքում Հայկական Կարմիր խաչի ընկերության «Որոնում» ծառայությունը ստացել է ավելի քան 100 որոնման հայտ: Կատարված աշխատանքների շնորհիվ ավարտել է 26 հայտ, որոնցից ութը ստացել են դրական, իսկ 18՝ բացասական արդյունք: Արագ արձագանքման հայտերի թիվը կազմել է 62:

Տաս անհայտ կորածների որոնումը կազմակերպելու նպատակով, պատրաստվել և «Երկիր Մեդիա» և «Երևան» հեռուստաընկերությունների կողմից եթեր է հեռարձակվել սոցիալական հոլովակ: Հեռուստաքարոզարշավը նաև նպաստել է «Որոնում» ծառայություն դիմողների թվի ավելացմանը և ծառայության լուսաբանմանը:

2010թ. սեպտեմբերի 1-ից Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է «Հնարավոր աղետների դեպքում ընտանեկան կապերի վերականգման կարիքների գնահատում» ծրագիրը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ֆինանսավորմամբ, որի նպատակն էր ուժեղացնել «Որոնում» ծառայության պատրաստվածությունը՝ հասկանալու և հոգալու ընտանիքների կապերի վերամիավորման կարիքներն աղետի ընթացքում:

«Որոնում» ծառայության կողմից սպասարկվել են ավելի քան 160 շահառուներ:

During 2010, the Armenian Red Cross Society Tracing Service received more then 100 tracing cases. 26 cases have been completed. Eight cases have been closed positively, whereas 18 negatively. The number of rapid response cases was 62.

In order to organize tracing of ten missing persons, a social video clip was made and broadcast by “Yerkir Media” and “Yerevan” TV channels. The TV campaign also promoted increase of the number of appeals to Tracing Service and dissemination of Tracing Service.

Since 1 September, 2010 the Armenian Red Cross Society has implemented “Assessment of the restoring family links needs during disasters” program by the financial support of the International Committee of the Red Cross. The purpose of the program was to strengthen the preparedness of Tracing Service to identify and address the needs of restoring family links during disasters.

More than 160 beneficiaries have been covered by Tracing Service.

# ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Կարմիր խաչի սկզբունքների և արժեքների տարածման նպատակն է բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ/ԿՄ) միջազգային շարժման պատմության, բաղկացուցիչների, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ), խորհրդանշանների գործածության և չարաշահման, Ազգային ընկերության (ԱԸ) գործունեության և առաքելության վերաբերյալ, ինչպես նաև ամրապնդել ԱԸ կապը լրատվամիջոցների հետ՝ աջակցելով Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ), որպես մարդասիրական ոլորտում կառավարությանն օժանդակ կազմակերպության, գործունեության ճշգրիտ ընկալմանն ու լուսաբանմանը:



# INFORMATION AND DISSEMINATION

Dissemination of Red Cross Principles and Values aims at raising public awareness on the history of the Red Cross and Red Crescent (RC/RC) Movement, its components, main principles, International Humanitarian Law (IHL), promoting use and protection of RC Emblem, activities and mission of the National Society (NS), as well as strengthening the contacts with mass media to ensure the correct perception and dissemination of activities of the Armenian Red Cross Society (ARCS) role as an auxiliary to the Government.





ՀԿԽԸ սերտորեն համագործակցում է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ և վերջինիս ֆինանսավորմամբ իրականացնում «Լուսաբանում» ծրագիրը: Ծրագիրը գործում է տարբեր ուղղություններով և ներառում ինչպես պարբերաբար լուսաբանումներ տարբեր ուսումնական հաստատություններում, միջազգային և տեղական կազմակերպություններում, այնպես էլ մի շարք հանրային միջոցառումներ:

Մայիսի 8-ին՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրը, ՀՀ ամբողջ տարածքում իրականացվել են լայնածավալ լուսաբանման միջոցառումներ: Այդ թվում «Օհանյան» կրթահամալիրում կազմակերպվել էր օրվան նվիրված միջոցառում, որը ներառում էր՝ վիկտորինա, նկարչական մրցույթ և կավճանկարչություն: Նախապես լուսաբանված լինելով, «Օհանյան» կրթահամալիրի VI-VIII դասարանների 25 սաները մասնակցեցին ԿԽ թեմայով կազմակերպված վիկտորինային, որը ներառում էր ինչպես տեսական, այնպես էլ տեսանյութերից կազմված հարցեր: Միևնույն ժամանակ դպրոցի բակում աշակերտները  նկարեցին ԿԽ սկզբունքները: Կավճանկարչության մրցույթին մասնակցեցին 4-5 տարեկան երեխաները: Մրցույթի թեման էր՝ «Կարմիր խաչը երեխաների աչքերով»: Միջոցառման բոլոր մասնակիցները ստացան խրախուսական մրցանակներ, և միջոցառման ընթացքում ներկաներին տրամադրվեցին տեղեկատվական նյութեր:

ՀԿԽԸ գործունեությունն առավել տեսանելի դարձնելու նպատակով ՀՀ մարզերում իրականացվել են մի շարք լուսաբանման ծրագրեր: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրերն իրականացվել են Տավուշի և Շիրակի մարզերում, մեկնարկել և ընթացքի մեջ են Լոռու և Վայոց Ձորի մարզերում, իսկ ՀՀ մյուս մարզերում կիրականացվեն 2011թ. ընթացքում:

Շիրակի մարզում անցկացվել է «Կարմիր խաչի աշխարհ» եռօրյա մրցույթ, որը իրենից ներկայացնում էր լուսաբանում նորարական մեթոդով Շիրակի կրթական տարբեր հաստատությունների ուսնողների համար  և ավարտվել է Գյումրիի հրապարակում թատերականացված արշավով:

Տավուշի մարզում իրականացվել է լուսաբանման միջոցառում, որը ամփոփել է սահմանափակ կարողություններով երեխաներին նվիրված միամսյակը: «Միանանք հանուն հավասար իրավունքների» խորագրով միջոցառումը իր մեջ ներառում էր կլոր սեղան, երեխաների ձեռքերով պատրաստված իրերի ցուցահանդես վաճառք և համերգ:

ARCS closely cooperates with the International Committee of the Red Cross (ICRC) and with the funding of the latest implements “Dissemination” program. The program is being realized in different directions and includes both regular disseminations in different educational institutions, international and local organizations, as well as a number of public events.

On May 8, World Red Cross and Red Crescent Day, large-scale dissemination events were held in the whole area of  RA. Among them in “Ohanyan” educational center an event dedicated to the day was organized which included children quiz, drawing competition and chalk drawing. Being preliminary disseminated 25 pupils of the VI-VIII grades of “Ohanyan” educational center participated in children quiz on RC themes. The quiz included both theoretical questions and questions made from video materials. Meanwhile, in the yard of the educational center, pupils painted the principles of RC. 4-5 years old children participated in the chalk drawing. The theme of the chalk drawing was “Red Cross with the eyes of children”. All participants of the event were given encouraging prices. Informational materials were distributed among guests during the events.

In order to make the activities of ARCS more visible a number of dissemination projects were implemented in regions of RA. During current year the projects were carried out in Tavush and Shirak regions, started and are in process in Lori and Vayots Dzor regions.  In other regions of RA the projects will be held during 2011.

Three days game quiz entitled “Red Cross World” was implemented in Shirak region. The contest was a new dissemination method for the students of different educational institutions and finished with a theatrical campaign in the central square of Gyumri.

A dissemination event which also concluded a month campaign dedicated to children with disabilities was organized in Tavush region. An event entitled “Let's join for Equal Rights” included a round table, concert and sale-exhibition of goods made by the children.



ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացվել է «Կարմիր խաչն իմ աչքերով» շարադրությունների մրցույթը, որին մասնակցել է 896 իններորդ դասարանցիներ Երևանից և ՀՀ Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերից: Մրցույթի նպատակն էր ամփոփել Կարմիր խաչի Շարժման և ՀԿԽԸ մասին աշակերտների գիտելիքների մակարդակը:

2005 թ-ից ի վեր ԿԽՄԿ-ն կազմակերպում է ՄՄԻ վերաբերյալ դատախաղ մրցույթ իրավաբան ուսանողների համար: ՄՄԻ ոլորտում գործունեությունն ակտիվացնելու նպատակով 2010թ. ՀԿԽԸ ակտիվ տեխնիկական և մարդկային աջակցություն ցուցաբերեց մրցույթի կազմակերպմանը:

ԿԽ/ԿՄ միջազգային շարժման, ՀԿԽԸ գործունեության, ՄՄԻ և լրատվամիջոցների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպման մասին կամավորների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով պարբերաբար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և քննարկումներ:

Տարվա ընթացքում ՀԿԽԸ ակտիվորեն համագործակցել է ԶԼՄ-ների հետ, ինչպես նաև հրատարակել է «ՀԿԽԸ 2009թ. տարեկան զեկույցը», ՀԿԽԸ գործունեությունը ներկայացնող տեղեկագրերը՝ հունվար-հունիս և հուլիս-դեկտեմբեր ամիսների կտրվածքով, տեղեկատվական բուկլետ և ցուցապաստառ:

Տարվա ընթացքում ՀՀ բոլոր մարզերում լուսաբանման աշխատանք են տարվել ավելի քան 13 000 մարդկանց համար և բաշխվել են շարժումը լուսաբանող ավելի քան 5000 տպագիր նյութեր:

In the cooperation with the Ministry of Education and Science of RA a composition contest entitled “Red Cross in my eyes” was organized. 896 pupils of the IX grades from Yerevan and Ararat, Armavir, Lori, Kotayk, Gegharqunik, Shirak, Syunik regions of RA participated in contest. The purpose of the contest was to summarize the level of knowledge of pupils on RC Movement and ARCS activities.

Since 2005, the ICRC organizes a Moot Court competition on IHL for the students of law departments. In order to stir up the activities in the sphere of IHL, ARCS made its active technical and human contribution in the process of organizing the competition in 2010.

With the purpose of raising the level of knowledge of volunteers on RC/RC Movement, ARCS activities, IHL, as well as on organizing effective work with mass media a number of training sessions and discussions were organized.

During the year ARCS actively cooperated with Mass Media, published “ARCS Annual Rreport 2009”, newsletters on the main activities covering the period of January-June and July-December, informational booklets and posters during the year.

Dissemination activities were held for more than 13 000 people and more than 5000 printed materials were distributed among population in all regions of RA during the year.









Երիտասարդական Կարմիր խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

1. Սոցիալական խնամք
   - իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին
2. Առողջապահություն
   - իրականացնում է ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծրագրեր
   - կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում
3. Ռեսուրսների հայթայթում
   - իրականացնում է Ռեսուրսների հայթայթման ծրագրեր
   - կազմակերպում է քարոզարշավներ, դրամահավաքներ, հանգանակություններ, բարեգործական երեկոներ
   - պատրաստում է բացիկներ, զարդեր և այլ նյութեր բարեգործական միջոցառումների համար
4. Միջազգային համագործակցություն
   - իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանական Կարմիր խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
   - կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների
5. Կարմիր Խաչի մարդասիրական արժեքների լուսաբանում
   - կազմակերպում է Կարմիր խաչի գաղափարների լուսաբանում դպրոցներում և բուհերում
   - նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը
   - հրատարակում է ԵԿԽ գործունեությունը լուսաբանող տեղեկագիր:

Red Cross Youth (RCY) is young volunteer members organization acting in the frames of the Armenian Red Cross Society (ARCS), founded on 3 November, 1992. It acts in all ARCS regional and territorial branches and works in the following spheres:

1. Social care
   - Implementing psychosocial support programs for lonely elderly people, orphans, refugee children and children from vulnerable families

2. Health care
   - Implementing HIV prevention programs
   - Organizing different public events and training sessions on healthy life-style in educational institutions

3. Fund raising
   - Implementing Fund Raising programs
   - Organizing campaigns, donations, fund raising and charity dinners
   - Making post cards, jewellery and other goods for charity events

4. International cooperation
   - In the frames of the "European Voluntary Service" is implementing exchange of young volunteers between British and German Red Crosses
   - Organizing and participating in international meetings, camps, seminars and training sessions

5. Dissemination of Red Cross humanitarian values
   - Organizing the dissemination of Red Cross principles in educational institutions
   - Promoting the activation of voluntary movement, recruiting of volunteers and their integration into the activities of ARCS
   - Publishing newsletters on RCY activities.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն (ՀԿԽԸ) իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ/ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, կառավարությունների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ: Այդ ուղղությամբ Ազգային ընկերությունը (ԱԸ), հաշվետու տարվա ընթացքում, ձեռք է բերել նոր կապեր, հաստատել և ընդլայնել է իր համագործակցությունը  տեղական և միջազգային կազմակերպու-թյունների, ինչպես նաև քույր ԱԸ հետ:

The Armenian Red Cross Society (ARCS) with its activities continuously cooperates with all components of the Red Cross and Red Crescent International Movement, Governments, international and local organizations. In the current year the National Society (NS) established new relations, established and strengthened its cooperation with local and international organizations, as well as with sister NSs.







2010թ. ընթացքում ՀԿԽԸ իրականացրել է համատեղ ծրագրեր Նորվեգական, Բրիտանական, Ճապոնականան, Դանիական Կարմիր խաչերի, Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության, Հայ Կարմիր խաչի փոխօգնության կոմիտեի Լեոնի մասնաճյուղի, Վորլդ Վիժն, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրեր, Միջազգային օգնություն և զարգացում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, Գերմանական տեխնիկական համագործակցություն, Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի աղետների նախապատրաստման ծրագիր և մի շարք այլ միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

2010թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության և ՀԿԽԸ միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր` առաջին օգնության, աղետների կառավարման, թրաֆիկինգի, միգրացիայի, առողջապահական խնդիրների իրազեկման, միջազգային մարդասիրական իրավունքի լուսաբանման, աճող սերնդի կրթության և մի շարք այլ ոլորտներում համագործակցելու նպատակով:

Տարվա ընթացքում ՀԿԽԸ մասնակից է դարձել մի շարք կարևոր միջազգային հանդիպումների: ՀԿԽԸ շուրջ 20 աշխատակիցներ և կամավորներ ներկայացրել են ԱԸ միջազգային տարբեր նշանակալի միջոցառումների ընթացքում, մի շարք տարածաշրջանային, ինչպես նաև միջազգային համագործակցության հանդիպումների և դասընթացների, Առաջին օգնության Եվրոպական մրցույթի, պարբերաբար կազմակերպվող սեմինարների և կոնֆերանսների, ուսումնական դասընթացների, ճամբարների և այլ հանդիպումների ժամանակ:

ԱԸ-ների միջև փորձի փոխանակման նպատակով 2010թ. ՀԿԽԸ հյուրընկալել է չորս Եվրոպական Կամավորական Ծառայության կամավորների` մեկ կամավորի Գերմանական Կարմիր խաչից և երեք կամավորներ Բրիտանական Կարմիր խաչից, որոնք ակտիվորեն ներգրավված են եղել ՀԿԽԸ գործունեության մեջ, նախաձեռնել և իրականացրել են բազմաբնույթ միջոցառումներ, պատրաստել էլեկտրոնային տեղեկագիր, նրանք նաև այցելել են տեսարժան վայրեր և ծանոթացել հայկական մշակույթին: ՀԿԽԸ յոթ կամավորներ հյուրընկալվել են Բրիտանական Կարմիր խաչի կողմից և մասնակցել Մեծ Բրիտանիայում սոցիալական բարեգործական ծրագրերին:

ՀԿԽԸ հանդիսանում է մի շարք միջազգային ցանցերի և աշխատանքային խմբերի անդամ, ինչպիսիք են` Փախստականների, ապաստան հայցողների և միգրանտների հարցերով Եվրոպական Կարմիր խաչի ընկերությունների համագործակցության հարթակը, Եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների սոցիալ-հոգեբանական աջակցության ցանցը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի երիտասարդական հանձնաժողովը, հատուկ կարիքներով Փախստականների կարիքների գնահատման ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի աշխատանքային խումբը, Առաջին օգնության եվրոպական Խորհրդատվական Կենտրոնը, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի եվրոպական համակարգման կոմիտեն, «Թրաֆիքինգի դեմ պայքար, Վերադարձ» աշխատանքային խումբը, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով (ՄՀՀ), եվրոպական Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և Տուբերկուլոզի համացանցը, Կամավորության զարգացման Եվրոպական ցանցը:

In 2010 ARCS continued implementation of joint programs with Norwegian, British, Japanese, Danish Red Crosses, Baden - Wuerttemberg Provincial Branch of German Red Cross, British Red Cross, Lyon Branch of the Committee for support to the Armenian Red Cross, World Vision, United Nations High Commissioner for Refugees in Armenia, United Nations Development Programme, International Relief and Development, United States Agency for International Development, German Technical Cooperation, European Commission Humanitarian Aid department's Disaster Preparedness Programme and with a number of international and local organizations.

In 2010 a cooperation agreement between the Ministry of Education and Science of RA and ARCS was signed with purpose of cooperating in the spheres of First Aid, Disaster Management, Trafficking, Migration, Health and Care, International Humanitarian Law, education of growing generation.

Throughout the year ARCS participated in a number of important international meetings. About 20 ARCS members and volunteers presented NS during various important international events, in a number of regional, as well as international cooperation meetings and training sessions, First Aid Convention in Europe, regularly organized seminars and conferences, educational trainings, camps and during other meetings.

With the purpose of experience exchange between NSs in 2010 ARCS hosted four volunteer from the European Voluntary Service, one from German Red Cross and three volunteers from British Red Cross. The volunteers were actively involved in the activities of ARCS, carried out and implemented various events, prepared an electronic newsletter as well as went sightseeing and got acquainted with historical places and Armenian culture. ARCS seven volunteers visited British Red Cross and took part in social charitable programs in Great Britain.

ARCS is a member of numerous international networks and working groups, such as Platform for European Red Cross Cooperation on Refugees, Asylum Seekers and Migrants, European Network for Psychosocial Support, Youth Commission of the International Federation of Red Cross and Red Crescent Societies, UNHCR working group for needs assessment of refugees with special needs, European Reference Center for First Aid Education, Red Cross and Red Crescent European Coordination Committee, “Anti-Trafficking, Return” working group, Country Coordination Commission on HIV/AIDS, TB and malaria issues (CCM) in the Republic of Armenia, European Red Cross and Red Crescent Network on HIV/AIDS and tuberculosis, European Network for the Development of Volunteering.

Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային միավորման ներկայացուցչությունն իրականացնում է պետական և ոչ պետական սոցիալական օժանդակության սանդղակից դուրս մնացած և սակավ օժանդակություն ստացող կարիքավոր անձանց սոցիալական կարիքների գնահատում և հասցեավորված օժանդակության ցուցաբերում ՀՀ-ում:



The representation of Baden-Württemberg Provincial Branch of German Red Cross implements social needs assessment and provision of addressed support to people in need receiving little support or left out of governmental and non-governmental social support programs in RA.







## «Գթության խոհանոց» ծրագիր

2010թ. հոկտեմբերի 18-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում քահանա Կառլ-Հայնց Շայդեի գլխավորությամբ տեղի ունեցավ «Գթության խոհանոց» ծրագրի 17-րդ շրջանի պաշտոնական բացումը: Ծրագրի շահառուներն էին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների սոցիալական ծառայությունների կողմից ընտրված սոցիալապես առավել անապահով միայնակ թոշակառուներ, հաշմանդամներ, ծնողազուրկ երեխաներ, որոնք օրեկան մեկ անգամ ստանում էին տաք, բարձր կալորիականությամբ սնունդ: Բացի այդ շահառուներին բաշխվել է հագուստ: Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի Շվեբիշ-Գմյունդ քաղաքի Գթության խոհանոցի ընկերական շրջանի կողմից հանգանակված գումարներով: Ծրագրին նաև աջակցել են Երևանի քաղաքապետարանը, Հայաստանում Գերմանիայի դեսպանատունը, Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

«Տնային խնամք» ենթածրագրում ընդգրկվել են «Գթության խոհանոց» ծրագրի այն շահառուները, ովքեր անկողնային հիվանդ կամ հաշմանդամ են և չեն կարողանում ինքնուրույն հոգալ առօրյա կարիքները: Այցելու քույրերի, կամավորների և բժշկի օգնությամբ վերջիններս ստացել են իրենց հասանելիք սնունդը, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնություն:

«Մանկական սնունդ» ենթածրագրի շահառուներն են բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները, բարձր ռիսկային խմբի երեխաները, փողոցի, մուրացիկ, սոցիալապես խիստ անապահով երեխաները, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները, հաշմանդամ՝ մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող երեխաները, վարքի դժվարություններ ունեցող երեխաները, ինչպես նաև սահմանամերձ շրջանների խոցելի խմբի երեխաները: Ծրագրի շահառու կազմակերպություններն են՝ ք. Գյումրու «Համայնքային զարգացման և աջակցության կենտրոնը», ք. Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ԲՀԿ-ն, Լոռու մարզի Արևածագ գյուղի մանկապարտեզը, ք. Վանաձորի «Խաչվող ուղիներ» ՀԿ-ն, ք. Երևան «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնը, ք. Մարտունու «Կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն, ք. Բերդի «Սոսե մայրերի ասոցիացիան»:

Ընդհանուր առմամբ «Գթության խոհանոց» ծրագրում ընդգրկվել են շուրջ 500 շահառու:

## “Soup Kitchen” program

On 18 October, 2010, the 17th season of the “Soup Kitchen” program was officially opened under the direction of priest Karl-Heinz Scheide in Qanaqer-Zeytun community. The beneficiaries of the program were socially most vulnerable lone elderly, disabled people and orphans, selected by social services of Arabkir and Qanaqer-Zeytun communities of Yerevan, who received hot and high-calorie food once a day. The beneficiaries were also provided with clothes. The program was implemented with financial support of “Soup Kitchen” friend circle in Schwaebisch-Gmuend town of Germany. The program was also supported by the Municipality of Yerevan, German Embassy in Armenia, Community Municipal offices of Qanaqer-Zeytun Communities, the Ministry of Labor and Social Affairs of RA.

“Home Care” mini-project included beneficiaries of “Soup Kitchen” program who are bed-ridden or handicapped and are not able to meet their daily needs themselves. The beneficiaries received their food, as well as psychosocial and medical support by visiting sisters, volunteers and a physician.

Beneficiaries of “Child Food” mini-project are children from large and socially needy families, children from high risk group, street, handicapped children, half-orphans and orphans, beggars, children with mental and physical disabilities, children with behavior problems and children from vulnerable groups of border line communities. Beneficiary organizations of the program are "Community Development and Support" Center in Gyumri, "Fill Life" charity NGO in Stepanavan, kindergarten in Arevatsag village of Lori region, "Crossing Roads" NGO in Vanadzor, "Salvation" center of handicapped children and youth in Yerevan, "Women's community council" NGO in Martuni, "Sose mothers' association" in Berd.

Totally 500 beneficiaries were included in “Soup Kitchen” program.

Ռեսուրսների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում ստեղծված խումբը մշակել և հաջողությամբ իրականացրել է ռեսուրսների հայթայթման բազմաթիվ ակցիաներ: Հանգանակության տուփեր են տեղադրվել Երևանի հանրային վայրերում, «Արմենիա միջազգային օդանավակայանների» («Զվարթնոց») տնօրինության աջակցությամբ և համագործակցությամբ օդանավակայանի ժամանման և մեկնման սպասասրահներում, ինչպես նաև երիտասարդ կամավորների ուժերով պատրաստվել են զարդեր և բացիկներ, որոնք իրացվել են ցուցահանդես - վաճառքների միջոցով: Այս ակցիաների արդյունքում հայթայթված միջոցները հատկացվել են հանրակացարանաբնակ երեխաների և միայնակ տարեցների կարիքներին:

2010թ. ապրիլին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) եզրափակեց 2009թ. սկսած «Կարմիր խաչը քեզ համար, իսկ դու Կարմիր խաչի համար» դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն էր զարգացնել ՀԿԽԸ կարողությունները հաղորդակցության և ռեսուրսների հայթայթման ոլորտներում բազմաբնույթ հանրային միջոցառումներից բաղկացած համընդհանուր քարոզարշավի միջոցով: Ծրագիրն իրականացնելիս ՀԿԽԸ համագործակցել է «Արմենիա միջազգային օդանավակայանների» («Զվարթնոց»), «ՎիվաՍել-ՄՏՍ» բջջային կապի օպերատորի, Հայկական Երկրորդ հեռուստաալիքի, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի, «Նիկիտա Մոբայլ» և մի շարք այլ կազմակերպությունների հետ: Ծրագրի եզրափակիչ փուլում իրականացվեց սոցիալական քարոզարշավ՝ «Նրանք սպասում են մեզ…» կարգախոսի ներքո, որի նպատակը հանրության ուշադրությունը հանրակացարանաբնակ միայնակ ծերերի սոցիալական, առողջական և հոգեբանական խնդիրների վրա սևեռելն էր: Քարոզարշավը բաղկացած էր երկու փուլից՝ իրազեկում և դրամահավաք: Այն ամփոփվեց ապրիլի 21-ին կազմակերպված բարեգործական երեկոյով՝ ՀՀ անվանի գործիչների մասնակցությամբ:



A team, formed in the frames of the resource mobilization program, developed and successfully implemented various fundraising activities. Charity boxes were placed in public places across Yerevan and with the support and cooperation of the governing body of “Armenia International Airports” (“Zvartnots”) charity boxes were placed in arrival and flight waiting rooms. Jewellery and cards were made by youth volunteers and were sold during sale-exhibitions. The funds raised from these activities went to support people in need such as children living in dormitories and lonely elderly people.

In April 2010 the Armenian Red Cross Society (ARCS) concluded “The Red Cross for you and you for Red Cross” grant program, which started in 2009. The purpose of the program was to develop the capacity of ARCS in the field of communication and resource mobilization via a global campaign consisting of various public events. During the implementation of the program ARCS cooperated with “Armenia International Airports” (“Zvartnots”), VivaCell-MTS mobile operator, Armenian Second TV channel, “Yerkir Media” TV Company, “Armenia Marriott” Hotel, “Nikita Mobile” and with other organizations. In the final stage of the program a social campaign was launched under the slogan “They are waiting for us…” which was aimed at focusing public attention on social, psychological and medical problems of lonely elderly people living in dormitories. The campaign was concluded with a charity dinner on 21 April with the participation of famous people of RA.

Քարոզարշավի արդյունքում հայթայթված միջոցներով թվով 400 հանրակացարանաբնակ ծերերին տրամադրվել է սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ՝ երիտասարդ կամավորների կողմից նրանց համար կազմակերպված մշակույթային երեկոների ընթացքում:

Ռեսուրսների մոբիլիզացման ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքի շնորհիվ համագործակցություն է հաստատվել «Աշտարակ կաթ» (կաթնամթերքի արտադրություն) հետ՝ ՀՀ 11 մարզերի հանրակրթական դպրոցներում առողջապահական ծրագիր իրականացնելու համար:



2010թ. ՀԿԽԸ ՎիվաՍել-ՄՏՍ բջջային օպերատորի աջակցությամբ մեկնարկեց քարոզարշավ՝ ուղղված Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի՝ Հաիթիին ֆինանսական աջակցություն տրամադրելու կոչին: Հատուկ բանկային հաշվեհամարով «Նիկիտա Մոբայլ»-ի կողմից տրամադրված կարճ համարով հաղորդակցություններ ուղարկվեցին ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդներին՝ կոչ անելով նվիրատվություն կատարել: Հետուստատեսությամբ եթեր հեռարձակվեց հատուկ տեղեկատվական տեսահոլովակ կարճ հաղորդակցություն ուղարկելու կոչով: 2010թ. փետրվարին ավարտված քարոզարշավի արդյունքում բանկային փոխանցումների միջոցով 587700 դրամ, 64000 դրամ՝ կարճ հաղորդագրությունների միջոցով և ՀԿԽԸ կամավորների կողմից հայթայթված 145980 դրամ է հատկացվել Հաիթիի օգնության ֆոնդին:

Ռեսուրսների հայթայթման ծրագրերի արդյունքում հայթայթված միջոցների շնորհիվ օգնություն է ստացել 640 շահառու:

In the result of the campaign about 400 lonely elderly people living in dormitories were provided with food parcels and hygienic supplies during cultural evenings organized by youth volunteers.

As a result of activities carried out in the frames of resource mobilization program cooperation with Ashtarak-Kat (dairy production) was established with the purpose of implementation health activities in secondary schools in 11 regions of RA.

In response to the International Federation of Red Cross and Red Crescent Societies appeal for financial support to Haiti, ARCS launched a campaign in 2010. A short SMS with the special bank account details was sent to the subscribers of VivaCell-MTS calling for donations. Special information video material was broadcast on TV as a call to donate through SMS. The campaign finished in February, 2010 and as a result 587700 AMD through Bank transfers and 64000 AMD through SMS donations and 145980 AMD was raised by ARCS young volunteers.

As a result of fundraising programs 640 beneficiaries received support.

| Եկամուտ | Հազար ՀՀ Դրամ | 1 ԱՄՆ $= 363,44 |
|---|---|---|
| Եկամուտ ճանաչված շնորհներ | 409181 | 1125855,7 |
| Անդամավճար | 663 | 1824,2 |
| Ծառայություն | 9434 | 25957,5 |
| Այլ | 11111 | 30571,8 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **430389** | **1184209,2** |

| Ծախսեր | Հազար ՀՀ Դրամ | 1 ԱՄՆ $= 363,44 |
|---|---|---|
| Ծրագրային ծախսեր | 409181 | 1125855,7 |
| Ծառայությունների մատուցման հետ կապված ծախսեր | 7060 | 19425,5 |
| Այլ | 11758 | 32352 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **427999** | **1177633,2** |

| Income | In 1000 AMD | 1 USD $= 363,44 |
|---|---|---|
| Received from donations | 409181 | 1125855,7 |
| Membership fees | 663 | 1824,2 |
| Services | 9434 | 25957,5 |
| Other | 11111 | 30571,8 |
| **TOTAL** | **430389** | **1184209,2** |

| Expenses | In 1000 AMD | 1 USD $= 363,44 |
|---|---|---|
| Expenses related to the implementation of projects | 409181 | 1125855,7 |
| Expenses related to provision of services | 7060 | 19425,5 |
| Other | 11758 | 32352 |
| **TOTAL** | **427999** | **1177633,2** |